6699

28
V-33

1 OCT 2009

28
36

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԻ

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ
Տպագրութիւն Ռ. ՍԱՂԱԹԵԱՆ
1911

28
36

ԱԶԴ

Գրքոյկիս տպագրութեան եւ վաճառման արտօնութիւն նուիրեցաւ Միացեալ Վարժարանաց, ի նպաստ ազգային վարժարանաց իւրեանց ջանիւք կանգնեցելոց։

Ուստի այս քանեւերկրորդ տպագրութենէս սկսեալ՝ ամէն օրինակ սոյն Միացեալ Վարժարանաց Տնօրէն Խորհրդոյ յատուկ կնիքն պիտի կրէ՝ փոխանակ իմոյս, զոր նախորդ տպագրութիւնքն կրէին։

Առանց սոյն կնքոյ օրինակներն աննաւատարիմ եւ անվաւեր լինելով, թէ՛ տպողք եւ թէ՛ վաճառողք պատասխանատու են առաջի օրինաց, եւ ենթակայ են պատժոյ եւ տուգանաց։

Կ. Պոլիս, 4 Մարտ, 1882

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ

25 JUN 2013

6699

62116.67

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երբոր մեկը մեզի հարցնէ թէ «Հաւատով ի՞նչ եմք», ամենքնիս ալ, մեծ ու պզտիկ, կը պատասխանենք թէ «Քրիստոնեայ եմք»։

Այս դիւրին, պարզ ու կարճ պատասխանը ամենքնիս ալ կրնամք տալու. բայց երբոր մեր հարցաքննողը աւելի հետաքրքիր ըլլալով մեզի հարցնելու ըլլայ թէ «Քրիստոնեայ ըսելով ի՞նչ կ'իմացամք», քանի մը սակաւաթիւ բացատրութիւններով, ամենքնիս ալ՝ մեծ ու պզտիկ՝ քիչ մը դժուարութիւն կը կրենք աս երկրորդ հարցման պատասխանն բաւականացուցիչ կերպիւ տալու։

Այս քիչ մը դժուարութիւն կրելնուս պատճառն ի՞նչ է. մեր երիտասարդութեան ժամանակը Քրիստոնեական կրօնից սկզբունքներուն չի պարապելնիս է կամ Ուսումնարաններնուս մէջ սա ամենահարկաւոր առարկային կանոնաւոր կերպիւ հոգ չի տարուելուն համար եւ կա՛մ ասոր վրայօր համառօտ եւ դիւրիմաց գրքեր ձեռքերնիս չի գտնուելուն համար։

Ահա այս ափսոսալի բերութեան պատճառաւ ալ է որ միամիտ մերազգիք՝ իրենց Ուղղափառ Հաւատոյ վրայօք կատարեալ տեղեկութիւն ջուներ-նալնուն համար՝ շատ պարագաներու մէջ օտարակրօն մարդոց առջեւ ամօթով մնալեն զատ (ցաւ է ըսելու) ոմանք ալ՝ թէ՛ մայրաքաղաքիս մէջ եւ թէ՛ ուրիշ շատ տեղուանք՝ շատ անգամ ջար ազդեցութիւններու զոհ կ'երթան։

Այս մասին կարեօք ջափ սիրելի Ազգիս նպաստելու փափաքը երկար ատենէ ի վեր սրտիս մէջ կար եւ նոյն փափաքս լեցնելու շատ յարմար գտայ Կրօնագիտութեան եւ Հայկաբանութեան քաջահմուտ դասատու Զմիւռնիացի Գրիգորեան Մսեր Պատուելոյն աշխատութեամբը յօրինուած Հաւատապատում եւ Քրիստոսապատում անունով երկու հատոր ընտիր գրքոյկներ որոնց պատուանշանութիւնը ամենուն ծանօթ է։

Ուստի յիշեալ հատորները մէկ ընելով եւ ոճը Տաճկաստանի Հայոց աշխարհաբարին յարմարցնելով ու առաջին հատորոյն վերջերը մեզի համար աւելորդ թանի մը թերթերն ու Ս. Ներսիսի Շնորհալոյն հայկական տառերուն վրայ ոտանաւորները դուրս ձգելով՝ սա գիրքը շարագրեցի. որուն առաջին հեղինակը եղող բազմերախտ պատուելոյն ընտրած Մանր Ուսմունք Քրիստոնէական Հաւա-

տոյ եւ Սրբազան Պատմութեան Աւետարանի անունը դրի։

Աս գիրքը երկու մասի բաժնուած է. առաջնոյն մէջ Հայ. Ուղղափառ Եկեղեցւոյ դաւանութեան համաձայն Քրիստոնէական հարկաւոր գիտելիքները, եւ երկրորդին մէջ՝ Սուրբ Աւետարանի աւանդութիւնները՝ ամփոփելով՝ յիշեալ հեղինակին կարգադրութեանը հետեւելով ու հարց պատասխանի ձեւը պահելով. որն որ միտք պահելու դիւրութիւն կուտայ։

Եթէ այս գիրքս սիրելի ազգիս ուսումնարաններուն մէջ կրթուող տղայոց եւ ուրիշ մարդոց ձեռքը անցնելով՝ (ինչպես որ կը յուսացուի) հոգեւոր օգուտ մը ընելու ըլլայ, նոյն օգտին համար պէտք եղած շնորհակալութիւնը սպասելու իրաւունք չունենալս առաջուց կը խոստովանիմ. միայն սա մխիթարութիւնը իմս պիտի ըլլայ որ յիշեալ բազմերախտ Հեղինակին նպատակը յառաջացնելու օգնական գործիք մը եղած պիտի ըլլամ ու սիրելի ազգակիցներս ինչո՛ւ համար քրիստոնեայ ըսուելնին պիտի գիտնան, Քրիստոնէական Աւետարանի պարունակած հոգեշահ աւանդութիւնները պիտի սորվին, որն մեծ պարծանք է Հայոց, ուստի եւ ինձ։

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ



Թոյլ տո՛ւք մանկտւոյդ գալ առ իս:

ՆՈՐ ՈՒՍՄՈՒՆՔ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՀԱՒԱՏՈՅ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՐՑՈՒՄ. Հաւատքով ի՞նչ ես:

ՊԱՏԱՍԽԱՆ. Քրիստոնեայ եմ:

Հ. Քրիստոնեայ ի՞նչ կը նշանակէ:

Պ. Քրիստոսի հետեւող կամ հաւատացող:

Հ. Քրիստոնէական վարդապետութիւնը ի՞նչ կը սորվեցնէ:

Պ. Աստուածպաշտութիւն:

Հ. Աստուած ի՞նչպէս պաշտել պէտք է:

Պ. Ճշմարիտ հաւատքով, հասուն յուսով և անկեղծ սիրով:

ԴԻԼՄԻԽ Ա.

ՀԱՒԱՏՔ

Հ. Քրիստոնէական հաւատալիքները ո՞ր գրուածքի մէջ կը գտնուին համառօտիւ։

Պ. Հաւատոյ Հանգանակին մէջ։

Հ. Ո՞րն է Հաւատոյ Հանգանակը։

Պ. «Հաւատամքն» է։

Հ. Եթէ գոց գիտես, ըսէ՛։

Պ. Գիտեմ։

«Հաւատամք 'ի մի Աստուած՝ 'ի Հայրն ամենակալ՝ յ'արարիչն երկնի և երկրի, երեւելեաց և առներեւութիւց։

«Եւ 'ի մի տէր Յիսուս Քրիստոս՝ յ'որդին Աստուծոյ ծնեալն յ'Աստուծոյ Հօրէ՝ միածին, այսինքն՝ յ'էութենէ Հօր։ Աստուած յ'Աստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յ'Աստուծոյ ճշմարտէ, ծնունդ՝ եւ ոչ արարած։ Նոյն ինքն 'ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յ'երկինս և 'ի

վերայ երկրի, երեւելիք և անե-
բեւոյթք։

«Որ յաղագս մեր մարդկան եւ
վասն մերոյ փրկութեան՝ իջեալ
յ'երկնից՝ մարմնացաւ, մարդա-
ցաւ, ծնաւ կատարելապէս 'ի
Մարիամայ սրբոյ կուսէն՝ Հոգ-
ւոյն Սրբով։ Որով էառ զմարմին,
զհոգի և զմիտս, և զամենայն որ
ինչ է 'ի մարդ, ճշմարտապէս եւ
ոչ կարծեօք։

«Զարշաբեալ, խաչեալ, թաղեալ։
յ'երրորդ աւուր յարուցեալ. ել-
եալ 'ի յ'երկինս նովին մարմնով՝
նստաւ ընդ աջմէ Հօր։

«Գալոց է նովին մարմնով եւ
փառօք Հօր, 'ի դատել զ'կենդա-
նիս և զ'մեռեալս։ Որոյ թագաւո-
րութեանն ոչ գոյ վախճան։

«Հաւատամք և 'ի Սուրբ Հո-
գին յ'անեղն և 'ի կատարեալն։ Որ

խօսեցաւ յ՚օրէնս և 'ի մարգարէս
և յ՚աւետարանս. որ էջն 'ի "Ցոր-
դանան. քարոզեաց յառաքեալսն
և բնակեցաւ 'ի սուրբսն։

"Հաւատամք և 'ի մի միայն
ընդհանրական եւ առաքելական
եկեղեցի, 'ի մի մկրտութիւն, յ՚ա-
պաշխարութիւն, 'ի քաւութիւն
և 'ի թողութիւն մեղաց, 'ի յա-
րութիւնն մեռելոց, 'ի դատաս-
տանն յաւիտենից Հոգւոց եւ
մարմնոց, յ՚աքայութիւնն երկնից
և 'ի կեանսն յաւիտենականս։

"Իսկ՝ որ ասեն, է՛ր երբեմն
յորժամ ոչ էր Որդի, կամ է՛ր եր-
բեմն յորժամ ոչ էր Սուրբ Հո-
գին, կամ թէ յ՚ոչէից եղեն, կամ
յ՚այլմէ էութենէ ասեն լինել
զին Աստուծոյ և կամ զ՚Սուրբ

Հոգին, և թէ փոփոխելի են կամ
այլայլելի, զայնպիսիսն նզովէ Կա-
թողիկէ և Առաքելական Սուրբ
Եկեղեցի։

"Իսկ մեք փառաւորեսցուք որ
յառաջ քան զյաւիտեանս, եր-
կիրպագանելով սրբոյ Երրորդու-
թեանն և միոյ Աստուածութեա-
նն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն
Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտ-
եանս յաւիտենից. ամէն։"

Հ. Այդ հանգանակը ո՞ւր տեղ սահման-
ուեցաւ։

Պ. Նիկիոյ ժողովոյն մէջ։

Հ. Նիկիա որո՞նք ժողովուեցան։

Պ. Երեք հարիւր տասն և ութը
հայրապետներ։

Հ. Ինչո՞ւ համար ժողովուեցան։

Պ. Արիոս Հերետիկոսը դատա-
պարտելու համար։

Հ. Արիոսի հերետիկոսութիւնը ի՞նչ էր։

Պ. Արիոս կ'ըսէր թէ Հայր Աստուած Որդիէն մեծ է և Որդին՝ արարած։

Հ. Հանգանակը ո՞վ բերաւ 'ի Հայս։

Պ. Արիստակէս Հայրապետը։

Հ. Ո՞վ էր Արիստակէս Հայրապետը՝։

Պ. Սուրբ Գրիգոր Լուսաւորչի կրտսեր տղան էր։

Հ. «Իսկ մեք փառաւորեսցուք»ը ո՞վ ըսաւ։

Պ. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ։

Հ. Այդ Հանգանակին մէջ քանի՞ հաւատալիք կան։

Պ. Ինն.

1. Գոյութիւն և միութիւն Աստուծոյ.

2. Խորհուրդ ամենասուրբ Երրորդութեան.

3. Արարչագործութիւն Աստուծոյ և Նախախնամութիւն.

4. Մարդեղութիւն Բանին Աստուծոյ.

5. Միւսանգամ գալուստ.

6. Հոգւոյն Սրբոյ Յարդանան իջնելը.

7. Քրիստոսի Եկեղեցին և անոր Խորհուրդները.

8. Յարութիւն մեռելոց.

9. Վերջին դատաստան։

Ա. Գոյութիւն եւ միութիւն Աստուծոյ

Հ. «Գոյութիւն և միութիւն Աստուծոյ» ըսելով ի՞նչ կիմանաս։

Պ. Կ'իմանամ թէ Աստուած կայ և մէկ է։

Հ. Աստուած ո՞ւր է։

Պ. Զօրութեամբը ամէն տեղ է, բայց էութիւնովը անպարագրելի է։

Հ. Ո՞ւսկից գիտես թէ Աստուած կայ։

Պ. Արարածներուն վրայ նայելով և Աստուածաշունչ գիրքը կարդալով։

Հ. «Արարած» ի՞նչ ըսել է։

Պ. «Ստեղծուած», այսինքն ուրիշէ եղած։

Հ. Ո՞ր բանը արարած կ'ըսուի։

Պ. Աստուծմէ զատ ամէն բան արարած է։

Հ. Աստուածաշունչ գիրքը ո՞րն է։

Պ. Հին և Նոր Կտակարանն է։

Հ. Ինչո՞ւ համար «Աստուածաշունչ» կ'ըսուի։

Պ. Անոր համար որ Աստուծոյ շնչովը, այսինքն՝ ազդեցութիւնովը գրուեցաւ։

Հ. Ո՞վ գրեց Հին Կտակարանը։

Պ. Մարգարէները գրեցին։

Հ. Նո՞ր Կտակարանը ով գրեց։

Պ. Առաքեալները գրեցին։

Հ. Աստուծոյ անունը ի՞նչ է։

Պ. «ՈՐ ԷՆ»։

Հ. Ո՞ւսկից գիտես։

Պ. Աստուած ինքը Մովսէս մարգարէին յայտնեց ըսելով. «Ես եմ Աստուած ՈՐ ԷՆ»։ (Ելից Զ. Գլ. 14 համար։)

Հ. Այդ անունը ի՞նչ կը նշանակէ։

Պ. Կը նշանակէ. «Ես եմ ինքնագոյ, անփոփոխ, անսկիզբն, անվախճան»։

Հ. Երբայեցւոց լեզուաւ այդ անունը ի՞նչ կ'ըսուի։

Պ. «ԵՀՈՎԱ»։

Հ. Ուրիշ անուն ալ կրնա՞յ տրուիլ Աստուծոյ։

Պ. Կարելի է, զոր օրինակ՝ Տէր Ամենակալ, Եւայլն։

Բ. Խորհուրդ Ամենասուրբ Երրորդութեան

Հ. Ամենասուրբ Երրորդութեան խորհուրդն ի՞նչ է։

Պ. Այդ խորհրդով կը հասկըՆանք թէ Աստուած մի է և անձինք երեք։

Հ. Աստուածային անձինք իրարմէ կը զանազանի՞ն։

Պ. Այո՛, անձնաւորութեամբ կը զանազանին։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Հօր անձն ուրիշ է, Որդւոյ անձն ուրիշ է, Հոգւոյն Սրբոյ անձն ուրիշ է։

Հ. Բնութեամբ ալ կը զանազանի՞ն։

Պ. Ո՛չ, ինչու որ համաբաւն, համագոյ, համակամ, համազօր և համատիաւ են, եւայլն, եւայլն։

Գ. Արարչագործութիւն Աստուծոյ
եւ Նախախնամութիւն

Հ. «Արարչագործութիւն» ըսելով ի՞նչ կ'իմանաս։

Պ. Կ'իմանամ թէ Աստուած երկինքն ու երկիրը եւ անոնց մէջ եղած ամէն բան ոչնչէ ստեղծեց։

Հ. «Նախախնամութի՞ւն» ըսելով ինչ կ'իմանաս։

Պ. Կ'իմանամ թէ Աստուած իր ամէն ստեղծածները իր խնամքով միշտ կը պահպանէ։

Դ. Մարդեղութիւն Բանին Աստուծոյ

Հ. Աստուածային երեք անձինքէն ո՞ը մարմին առաւ։

Պ. Որդին միածին։

Հ. Որմէ՞ն առաւ։

Պ. Սուրբ կոյս Մարիամէն։

Հ. Ի՞նչ ըսել է «մարմին առաւ»։

Պ. «Մեզի նման մարդ եղաւ» ըսել է։

Հ. Որդին Աստուծոյ մարմին չառած ի՞նչ կը կոչուէր։

Պ. Բան, Որդի Աստուծոյ, ևլն։

Հ. Մարմին առնելէն ետքը ի՞նչ կոչուեցաւ։

Պ. Յիսուս Քրիստոս, Մեսիա, Էմմանուէլ։

Հ. Էմմանուէլ ի՞նչ լեզուէ է եւ ի՞նչ ըսել է։

Պ. Եբրայեցւոց բառ է և «Աստուած մեզի հետ» ըսել է։

Հ. Քրիստոս կամ Մեսիա ի՞նչ լեզուէ է և ի՞նչ կը նշանակէ։

Պ. Քրիստոս Յունարէն է և Մեսիա Եբրայեցերէն. «Օծեալ» կը նշանակեն։

Հ. Ինչո՞ւ համար «Օծեալ» կ'ըսուի։

Պ. Անո՛ր համար որ Հոգին Սուրբէն օծուած էր իբրեւ Մարգարէ, Քահանայապետ ճշմարիտ և Թագաւոր յաւիտենական։

Հ. Ուսկի՞ց յայտնի է թէ Հոգին Սուրբէն օծուած էր։

Պ. Քրիստոս ի՛նքը ըսաւ. «Հոգի Տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս» (Ղուկ. Դ. Գլ. 18 համար)։

Հ. Յիսուս ի՞նչ կը նշանակէ և ո՞ր ազգի բառ է։

Պ. «Փրկիչ» կը նշանակէ և Եբրայեցւոց բառ է։

Հ. Ինչո՞ւ համար «Փրկիչ» կ'ըսուի։

Պ. Անո՛ր համար որ մարդկային ազգը փրկեց, ազատեց։

Հ. Ի՞նչ բանէ փրկեց։

Պ. Դժոխքէն ու սատանային ձեռքէն։

Հ. Ի՞նչ բանով փրկեց։

Պ. Իր չարչարանքովն ու մահուամբը։

Հ. Քրիստոս աշխարհի վրայ ի՞նչքան տարի ապրեցաւ։

Պ. Երեսուն երեք տարի կամ քիչ մը աւելի։

Հ. Ի՞նչ ըրաւ այնքան տարիներուն մէջ։

Պ. Շատ հրաշքներ գործեց, բժշկութիւններ ըրաւ, Աբքայութեան ճամբան քարոզեց, խաչեցաւ 'ի Հրէից, թաղուեցաւ և յարեաւ ինքնիշխան փառօք, համբարձաւ յ'երկինս և նստաւ ընդ աջմէ Հօր։

Ե. Միւսանգամ գալուստ Քրիստոսի

Հ. Քրիստոս նորէն պիտի գա՞յ յաշխարհ։

Պ. Պիտի գայ։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Իւր Աստուածային դօրութիւնովն ու փառքովը։

Հ. Ինչո՞ւ համար պիտի գայ։

Պ. Կենդանի և մեռած մարդիկը դատելու համար։

Հ. Ե՞րբ պիտի գայ։

Պ. Աստենը յայտնի չէ, ինչու որ Յիսուս չուզեց յայտնել։

Զ. Հոգւոյն Սրբոյ Յորդանան իջնելը

Հ. Հոգին Սուրբ ե՞րբ իջաւ Յորդանան։

Պ. Երբոր Քրիստոս Յովհաննէս Մկրտիչէն մկրտուեցաւ։

Հ. Ի՞նչպէս իջաւ։

Պ. Աղաւնիի կերպարանքով։

Հ. Ինչո՞ւ համար իջաւ։

Պ. Քրիստոսի Աստուածութիւնը յայտնելու համար և վկայելու թէ ճշմարտիւ Որդի Աստուծոյ է։

Է. Քրիստոսի եկեղեցին եւ խորհուրդները

Հ. «Եկեղեցի» ո՞ր ազգի բառ է և ի՞նչ կը նշանակէ։

Պ. Յունաց բառ է և ժողով կամ ժողովուրդ կը նշանակէ։

Հ. Քրիստոսի ժողովուրդը ո՞րն է։

Պ. Ամէն ճշմարիտ քրիստոնեաները։

Հ. Քրիստոսի եկեղեցին քանի՞ նշան կամ յատկութիւն ունի։

Պ. Զորս — Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն եւ Առաքելականութիւն։

Հ. Եկեղեցին ինչո՞ւ համար «Մի» կամ «Մէկ» կ'ըսուի։

Պ. Անոր համար որ ամէն քրիստոնեայ մէկ հաւատքով՝ մէկ Քրիստոս, մէկ Աստուած կը պաշտէ։

Հ. Եկեղեցին ինչո՞ւ համար «Սուրբ» կ'ըսուի։

Պ. Անոր համար որ ամէն քրիստոնեայ մկրտութիւնով սկզբնական մեղքէն կը սրբուի և քրիստոնէական հաւատքն ալ սրբութիւն կը քարոզէ։

Հ. Եկեղեցին ի՞նչ պաշտօն ունի երկրիս վրայ։

Պ. Եկեղեցին ա՛յն պաշտօնն ունի

որ հաւատացելոց կը սորվեցնէ մեղքերէ ու մոլութիւններէ հեռու կենալ և մեղանչողները ապաշխարութեան ու մորթեալներն ալ ուղղութեան կը կոչէ։

Հ. Քրիստոսի եկեղեցին ինչո՞ւ համար «Ընդհանրական» կ'ըսուի։

Պ. Անոր համար որ քրիստոնէութիւնը շատ ազգերու մէջ տարածուած է և մինչեւ աշխարհի վերջը պիտի մնայ։

Հ. Ի՞նչ վկայութիւն ունինք որ Քրիստոսի եկեղեցին պիտի մնայ մինչեւ աշխարհի վերջը։

Պ. Սա վկայութիւնը ունինք որ՝ երբ Քրիստոս Տէրն մեր պատուիրեց Առաքելոց և անոնց յաջորդներուն երթալ քարոզել Աւետարանը բոլոր աշխարհք, խոստացաւ անոնց իր ներկայութիւնն ըսելով.

«Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչեւ 'ի կատարած աշխարհի»։

Հ. Ինչո՞ւ համար «Առաքելական կ'ըսուի»։

Պ. Անոր համար որ Քրիստոնէական հաւատքը Առաքեալներուն ձեռքովը քարոզուեցաւ և Առաքեալներուն խօսքերուն վրայ հաստատուած է։

Հ. Եկեղեցին քանի՞ խորհուրդ ունի։

Պ. Եօթն՝

1. Մկրտութիւն.
2. Դրոշմ.
3. Ապաշխարութիւն.
4. Հաղորդութիւն.
5. Պսակ ամուսնութեան.
6. Ձեռնադրութիւն.
7. Օծումն Հիւանդաց։

Հ. «Մկրտութիւն» ի՞նչ ըսել է և ի՞նչ բանով կը կատարուի։

Պ. Լուացումն ըսել է և բնական ջրով կը կատարուի։

Հ. Ինչի՞ օրինակ է։

Պ. Քրիստոսի մահուան ու թաղման։

Հ. Ի՞նչ օգուտ ունի։

Պ. Երախան կը սրբէ, կը մաքրէ սկզբնական մեղքէն որուն մէջ ծնած է։

Հ. «Դրոշմ» ի՞նչ կը նշանակէ։

Պ. Կնիք հաւատոյ Յիսուսի Քրիստոսի և օծումն Ս. Հոգւոյն։

Հ. Այդ նշանը մարդուն ո՞ր տեղը կը դնեն։

Պ. Ճակտին եւ զգայարանքներուն վրայ։

Հ. Ի՞նչ նիւթով կը կատարուի։

Պ. Սրբալոյս Միւռոնով։

Հ. Դրոշմի օգուտն ի՞նչ է։

Պ. Քրիստոնէական հաւատքը

պահելու համար մկրտելին զօրութիւն կուտայ։

Հ. «Ապաշխարութեան» խորհուրդը ինչ է։

Պ. Ապաշխարել, այսինքն. ետքը լալ և զղջալ գործած մեղքերուն վրայ։

Հ. Ապաշխարութիւնը ինչպէս ըլլալ պէտք է։

Պ. Կատարեալ զղջումով և մեղքերը խոստովանելով քահանային։

Հ. Ինչո՞վ կը կատարուի։

Պ. Աղօթքով, պահօք, վճարմամբ և ողորմութեամբ։

Հ. Ի՞նչ օգուտ ունի։

Պ. Մարդը կը սրբէ այն մեղքերէն, զոր մկրտութենէն ետքը գործեր է։

Հ. Հաղորդութեան Ս. Խորհուրդը ինչ է։

Պ. Ճաշակումն մարմնոյ և արեան Տէառն։

Հ. Ինչո՞ւ համար այդպէս կը կոչուի։

Պ. Անոր համար որ հաղորդութիւնով Քրիստոսի մարմինն ու արիւնը կը ճաշակենք և հոգիով կը միանանք ընդ Յիսուսի։

Հ. Հաղորդութեան նիւթը ի՞նչ է։

Պ. Յորենի անխմոր հաց և խաղողի անարատ գինի։

Հ. «Ամուսնութեան» խորհուրդը ի՞նչ է։

Պ. Պսակումն է։

Հ. Ինչի՞ օրինակ է։

Պ. Քրիստոսի՝ Եկեղեցւոյ հետ անբաժան միաւորութեան օրինակ է։

Հ. «Ձեռնադրութեան» խորհուրդը ի՞նչ է։

Պ. Հոգեւոր պաշտօն է։

Հ. Ինչո՞ւ համար «Ձեռնադրութիւն» կ'ըսուի։

Պ. Անոր համար որ ձեռք դնելով կը կատարեն։

Հ. Ո՞վ ունի ձեռնադրելու իշխանութիւնը։

Պ. Եպիսկոպոսը եւ Կաթողիկոսը։

Հ. Ձեռնադրութիւնը քանի՞ աստիճան ունի։

Պ. Եօթն՝

1. Դռնապանութիւն.
2. Դպրութիւն.
3. Երգմեցուցչութիւն.
4. Ջահընկալութիւն.
5. Կիսասարկաւագութիւն.
6. Սարկաւագութիւն.
7. Քահանայութիւն.

Հ. Եպիսկոպոսութիւնը ի՞նչ է։

Պ. Գլխաւոր քահանայութիւն է, որ Քահանայապետութիւն ալ կ'ըսուի։

Հ. Կաթողիկոսութի՞ւնն ինչ է։

Պ. Գլխաւոր Եպիսկոպոսութիւն

է, անոր համար Եպիսկոպոսապետութիւն ալ կ'ըսուի։

Հ. Վարդապետն ի՞նչ աստիճան ունի։

Պ. Քահանայութեան աստիճան ունի, բայց ուսուցիչ ըլլալու պարտաւոր է, այսինքն Աստուածային պատգամները ժողովուրդին քարոզելու։

Հ. «Վերջին Օծումը ի՞նչ է։

Պ. Այն օծումն է, որ հիւանդներուն տահմանուած է։

Հ. Ինչո՞վ կը կատարուի։

Պ. Աղօթքով եւ օրհնած իւղով օծելով։

Հ. Առանց իւղով օծելու այդ խորհուրդը չի՞ կրնար կատարուիլ։

Պ. Կը կատարուի, ինչպէս որ Հայ. Առաքելական Եկեղեցին կը կատարէ միայն քահանայից աղօթքովը։

Ը. Յարութիւն Մեռելոց

Հ. «Յարութիւն Մեռելոց» ասելով ի՞նչ պէտք է իմանալ։

Պ. Պէտք է իմանալ թէ մեռած մարդիկներուն մարմինները վերջին Դատաստանին օրն իրենց հոգիներուն հետ միաւորելով՝ յարութիւն պիտի առնուն Աստուծոյ հրամանով։

Թ. Վերջին Դատաստան

Հ. Վերջին դատաստանը ո՞վ պիտի ընէ։

Պ. Տէրն մեր Յիսուս Քրիստոս։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Արդարները մեղաւորներէն զատելէն ետքը՝ ամէն մէկին իրենց գործքերուն համեմատ վարձք կամ պատիժ պիտի տայ։

Հ. Արդարներն ո՞ւր պիտի ըլլան և մեղաւորներն ո՞ւր։

Պ. Արդարները երկնից Արքայութեան մէջ պիտի ըլլան, իսկ մեղաւորները Դժոխոց մէջ։

Հ. Արքայութիւնը ի՞նչ է։

Պ. Անանկ երջանիկ վիճակ կամ կեանք մ'է, որ ո՛չ աչք տեսած է, ո՛չ ականջ լսած ունի և ո՛չ լեզուն կրնայ պատմել։

Հ. Դժո՞խքը ինչ է։

Պ. Անանկ դժբաղդ վիճակ մ'է, որ տանջանքներով ու թշուառութիւններով լեցուն է։

Ահա՛ Գառն Աստուծոյ
որ բառնայ զմեղս աշխարհի

ԴԱՍ Ա.

ՅՈՅՍ

Հ. Աստուծմէ յուսալու ի՞նչ բանի պէտք ունինք։

Պ. Պէտք ունինք յուսալ այն ամէն բարիքները զորս Աստուած խոստացած է իր սիրածներուն։

Հ. Ի՞նչ բարիք խոստացած է։

Պ. Յաւիտենական կեանք, հանգստութիւն և անվախճան երանութիւն։

ԴԱՍ Բ.

ՍԷՐ

Հ. Աստուծոյ սէրը մեզմէ ի՞նչ կը պահանջէ։

Պ. Կը պահանջէ որ անոր օրէնքը և պատուիրանքը պահենք։

Հ. Աստուծոյ օրէնքը ի՞նչ կը հրամայէ։

Պ. Զար գործերէն հեռու կենալ ու ողջկութիւն ընել։

Հ. Օրէնքը քանի՞ տեսակ է։

Պ. Երկու տեսակ է — Բնական ու Դրական։

Հ. Բնական օրէնքը ո՞րն է։

Պ. Մարդուս խղճմտանքն է։

Հ. Խղճմտանքը ինչո՞ւ համար օրէնք կը կոչուի։

Պ. Անոր համար որ մարդ խղճմտանքով կրնայ բարին ու չարը ճանչնալ։

Հ. Ինչո՞ւ համար «բնական» կը կոչուի։

Պ. Անոր համար որ ամէն մարդու սրտին մէջ բնութենէն կամ ծնած օրէն տպաւորուած է։

Հ. Բնական օրէնքէն ուրիշ ի՞նչ օրէնքներ կան։

Պ. Ամէն քաղաքական ու դատաստանական օրէնքները։

Հ. Այդ օրէնքները որո՞նք հաստատեցին։

Պ. Օրինաւոր թագաւորներն ու իշխանները։

Հ. Այդ օրէնքներուն ալ հնազանդելու պարտակա՞ն ենք։

Պ. Այո՛, ինչպէս որ Աստուծոյ հրամանին։

Հ. Դրական օրէնքը որն է։

Պ. Այն օրէնքն է զոր Աստուած գրով տուաւ։

Հ. Ինչո՞ւ համար «դրական» կ'ըսուի։

Պ. Անոր համար որ բնական օրէնքէն եռքը դրուեցաւ։

Հ. Դրական օրէնքը քանի՞ կը բաժնուի։

Պ. Երկուքի, այսինքն Հին եւ Նոր։

Հ. Հին օրէնքը ո՞րն է։

Պ. Այն է զոր Աստուած Մովսէս մարգարէին ձեռքովը տուաւ։

Հ. Ո՞ւր տեղ տուաւ։

Պ. Մինա լեռը։

Հ. Ե՞րբ։

Պ. Իսրայելացիներուն Եգիպտոսէն ելլելէն յետուն օր եռքը։

Հ. Հին օրէնքը քանի՞ տեսակ էր։

Պ. Երեք տեսակ էր, այսինքն Բարոյական, Ծիսական և Դատաստանական։

Հ. Հիմա այդ օրէնքները խափանուա՞ծ են։

Պ. Քրիստոնեայ ազգերուն մէջ Ծիսական ու Դատաստանական օրէնքները խափանուած են, բայց Բարոյական օրէնքը կը մնայ, ինչու որ Քրիստոս զայն Նորէն հաստատեց։

Հ. Բարոյական օրէնքը ո՞րն է։

Պ Աստուծոյ տասը պատուիրանքներն են։

Հ. Տասը պատուիրանքները ինչի՞ վրայ գրուած էին։

Պ. Երկու քարէ տախտակներու վրայ։

Հ. Գիտե՞ս որոնք են տասը պատուիրանքները։

Պ. Այո՛.

1. Մի՛ եղիցին քեզ այլք աստուածք՝ բաց յինէն.

2. Մի՛ տրասցես կուռս.

3. Մի՛ առնուցուս զանուն Աստուծոյ քո 'ի վերայ անօտեաց.

4. Յիշեա՛ սրբել զօր շաբաթու.

5. Պատուեա՛ զՀայր քո եւ զմայր.

6. Մի՛ սպանաներ.

7. Մի՛ շնար.

8. Մի՛ գողանար.

9. Մի՛ սուտ վկայեր.

10. Մի՛ ցանկանար տան ընկերի քո, եւայլն։

Հ. Առաջին պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ Իրմէ զատ ուրիշ աստուած չի ճանչնանք։

Հ. Երկրորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ կուռք չի շինենք, կուռք չի պաշտենք։

Հ. «Կուռք»ը ի՞նչ է։

Պ. Քարէ, փայտէ կամ ուրիշ նիւթերէ շինուած չաստուածներ ու արձանք։

Հ. Երրորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Ընչին բաներու համար Աստուծոյ անունը բերան չառնել, Աստուծոյ անունով երդում չընել։

Հ. Չորրորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ շաբաթ օրը սուրբ պահենք։

Հ. «Շաբաթ» ո՞ր ազգի բառ է և ի՞նչ կը նշանակէ։

Պ. Եբրայեցւոց բառ է և հանգըստութիւն կը նշանակէ։

Հ. Քրիստոնեաները պարտաւո՞ր են շաբաթ օրը պահելու։

Պ. Ո՛չ, շաբաթի տեղ կիւրակէ օրը պահելու պարտաւոր են։

Հ. Ո՞րն է կիւրակէ օրը։

Պ. Աշխարհի ստեղծուելուն առաջին օրն է և անոր համար միայն շաբաթ ալ կ'ըսուի։

Հ. Շաբաթի տեղ կիւրակէ օրը պահելը ո՞վ սահմանեց։

Պ. Առաքեալները սահմանեցին Քրիստոսի համբառնալէն ետքը։

Հ. Ինչո՞ւ համար։

Պ. Անոր համար որ Քրիստոս այն օրը յարութիւն առաւ ու Հոգին Սուրբ այն օրը Վերնատուն իջաւ։

Հ. Հայո՞ց բառ է «կիւրակէն»։

Պ. Ո՛չ, Յունաց բառ է ու «Տէրունական» ըսել է։

Հ. Կիւրակէ օրը ի՞նչպէս սուրբ պահել պէտք է։

Պ. Ծառայական գործերէ ազատ մնալով ու Հոգեշահ գործերու պարապելով։

Հ. Ծառայական գործերը որո՞նք են։

Պ. Մարմնաւոր շահերու համար եղած աշխատութիւններն են։

Հ. Հոգեշահ գործերն որո՞նք են։

Պ. Եկեղեցի երթալ, աղօթք ընել, քարոզ լսել, Աստուածաշունչ եւ ուրիշ հոգեւոր գրքեր կարդալ։

Հ. Հինգերորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ մեր հոգեւոր ու մարմնաւոր ծնողքները պատուենք։

Հ. Մեր հոգեւոր ծնողքները որո՞նք են։

Պ. Մեր բարեբարները, իշխան-

ները, վարժապետները, եկեղեցականները, եւայլն։

Հ. Ի՞նչպէս արժան է պատուել զանոնք։

Պ. Կատարեալ սէր ու հնազանդութիւն ցուցնելով անոնց և իրենց երախտիքը չմոռնալով։

Հ. Վեցերրորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ մարդ չի մեռցունենք, այսինքն մեր կամքով ուրիշներուն կամ մեր մեռնելուն պատճառ չըլլանք։

Հ. Եօթներորդ, ութերորդ և իններորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ անամօթաբար մեղքերու չի հեռուինք, գողութիւն չընենք ու սուտ բանի վկայ չըլլանք։

Հ. Տաներորդ պատուիրանքով Աստուած ի՞նչ կը հրամայէ։

Պ. Կը հրամայէ որ մեր ընկերներուն կամ ուրիշին ունեցածներուն ամենեւին աչք չի դնենք ու չի յափշտակենք զայնս։

Հ. Նոր օրէնքն ո՞րն է։

Պ. Քրիստոսէն աւանդուած եւ Առաքեալներէն քարոզուած ու գրուած պատուիրանքն է։

Հ. Քրիստոսի պատուիրանքները ի՞նչ կը հրամայեն։

Պ. Կը հրամայեն որ մեղքերէն ու մոլութիւններէն զգուշանանք և առաքինութիւն գործենք։

Հ. Մեղքերը քանի՞ տեսակ են։

Պ. Երկու՝ Ակզբնական ու Ներգործական։

Հ. Ակզբնական մեղքը ո՞րն է։

Պ. Ադամայ գործած մեղքն է, որ է անհնազանդութիւն։

Հ. Ադամ ի՞նչ բանի անհնազանդ եղաւ։

Պ. Աստուած անոր պատուիրած էր որ բարին ու չարը գիտնալու ծառին պտուղէն չուտէ, բայց ա-նիկա չի հնազանդելով կերաւ։

Հ. Ի՞նչ տեսակ ծառ էր։

Պ. Յայտնի չէ, ինչու որ Աստուածաշունչի մէջ անունովը գրուած չէ։

Հ. Ներգործական մե՞ղքը որն է։

Պ. Այն մեղքն է զոր մենք մըկրտութենէն ետքը կը գործենք։

Հ. Քանի՞ կը բաժնուի։

Պ. Երկուքի, այսինքն Մահացու ու Ներելի։

Հ. Մահացու մեղքերը որո՞նք են։

Պ. Ծանր ծանր մեղքերն են։

Հ. Ներելինե՞րը որոնք են։

Պ. Պզտիկ ու թեթեւ մեղքերն են։

Հ. Գլխաւոր մոլութիւնները քանի՞ են։

Պ. Եօթն՝

1. Հպարտութիւն.
2. Նախանձ.
3. Բարկութիւն.
4. Ծուլութիւն.
5. Ագահութիւն.
6. Որկրամոլութիւն.
7. Բղջախոհութիւն։

Հ. Հպարտութեան դէմ ի՞նչ առաքինութիւն գործել պէտք է։

Պ. Խոնարհութիւն։

Հ. Նախանձո՞ւ դէմ։

Պ. Եղբայրսիրութիւն։

Հ. Բարկութեա՞ն դէմ։

Պ. Հեզութիւն ու համբերութիւն։

Հ. Ծուլութեա՞ն դէմ։

Պ. Աշխատասիրութիւն։

Հ. Ագահութեա՞ն դէմ։

Պ. Ողորմածութիւն, աղքատասիրութիւն։

Հ. Ուրկրամոլութեա՞ն դէմ։

Պ. Բարեխառնութիւն, այսինքն ուտելու և խմելու չափաւորութիւն։

Հ. Բղջախոհութեա՞ն դէմ։

Պ. Ողջախոհութիւն կամ ժուժկալութիւն զոր աղօթքով Աստուծմէ ընդունիլ պարտաւոր ենք։

Հ. Աղօթքը քանի՞ կերպ է։

Պ. Երկու՝ Հրապարակական և Առանձնական։

Հ. Հրապարակական աղօթքը ո՞րն է։

Պ. Եկեղեցիներուն մէջ բազմութիւնով ուրիշներու հետ միկտեղ եղած աղօթքն է։

Հ. Առանձնական աղօթքը որն է։

Պ. Այն է զոր մենք միւնակ խուցիկամ սենեակի մէջ նստած կը կատարենք։

Հ. Աղօթքներուն գլխաւորը ո՞րն է։

Պ. Տէրունական աղօթքն է, այսինքն «Հայր մեր»ը։

Հ. Ի՞նչու համար այն աղօթքը «Տէրունական» կ'ըսուի։

Պ. Անոր համար որ Տէրն մեր Քրիստոսէ ուսանողուեցաւ։

Հ. «Հայր մեր»ին մէջ քանի՞ խնդրուածք կան։

Պ. Եօթն՝

1. Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո.

2. Եկեսցէ արքայութիւն քո.

3. Եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի.

4. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր.

5. Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողուցուք մերոց պարտապանաց.

6. Եւ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն.

7. Այլ փրկեա զմեզ 'ի չարէ.

Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք, յաւիտեանս, ամէն։

ՎԵՐՋ ՄԱՆՐ ՈՒՍՄԱՆՑ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԱՒԵՏԱՐԱՆԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՐՑՈՒՄ. Աւետարան բառը ի՞նչ կը նշանակէ։

ՊԱՏԱՍԽԱՆ. Աւետիս կամ բարի լուր պարունակող։

Հ. Ո՞վ գրեց Աւետարանը։

Պ. Չորս Աւետարանիչները, որք են՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս ու Յովհաննէս։

Հ. Ի՞նչ լեզուաւ գրեցին։

Պ. Մատթէոս՝ Եբրայեցւոց, Մարկոս՝ Եգիպտացւոց, Ղուկաս՝

Ասորւոց եւ Յովհաննէս Յունաց լեզուաւ։

Հ. Սուրբ Աւետարանին մէջ ի՞նչ բաներ կը պատմուին։

Պ. 1. Քրիստոսի ծնունդը.
2. Քրիստոսի մկրտութիւնը.
3. Քարոզութիւնները.
4. Հրաշագործութիւնները.
5. Չարչարանքը, մահը եւ թաղումը.
6. Յարութիւնը.
7. Համբարձումը։

ԳԼՈՒԽ Ա.

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Հ. Քրիստոս ո՞րմէն ծնաւ։

Պ. Սուրբ Կոյս Մարիամէն։

Հ. Որո՞ւն աղջիկն էր Սուրբ Կոյս Մարիամ։

Պ. Յովակիմին ու Աննային։

Հ. Քրիստոսի հայրը ո՞վ էր։

Պ. Ըստ մարմնոյ Հայր չունէր, բայց ըստ աստուածութեան՝ Հօր Աստուծոյ որդին էր։

Հ. Հապա ի՞նչու համար Որդի Դաւթի և Որդի Յովսեփայ կ'ըսուի։

Պ. Որդի Դաւթի անոր համար կ'ըսուի որ մայրը Մարիամ՝ Դաւիթի մարգարէին ցեղէն էր. իսկ Որդի Յովսեփայ ըսուելուն պատճառն այն է որ Մարիամ սուրբ Յովսէփին նշանուած էր։

Հ. Սուրբ Յովսէփ որո՞ւ ցեղէն էր։

Պ. Ան ալ Դաւիթի մարգարէի ցեղէն էր։

Հ. Արհեստը ի՞նչ էր։

Պ. Հիւսնութիւն։

Հ. Մարիամ ի՞նչու համար Աստուածածին կամ Աստուածամայր կ'ըսուի։

Պ. Անոր համար որ անկէ ծնած Քրիստոսը ոչ միայն մարդ չէր, այլ և Աստուած ու Որդի Աստուծոյ։

Հ. Քրիստոսի ծնունդը ե՞րբ եղաւ։

Պ. Աշխարհի ստեղծմանէն չորս

հազար տարի եղաք, Հերովդէս Ասկաղոնացիին տաճարը։

Հ. Հերովդէս ո՞վ էր։

Պ. Հրէից թագաւոր էր, Հռովմայեցւոց իշխանութեանը տակ։

Հ. Ո՞ւր կը նստէր։

Պ. Երուսաղէմ։

Հ. Այն տաճարը Հռովմայեցիներուն թագաւորն ո՞վ էր։

Պ. Օգոստոս կայսրը։

Հ. Ո՞ւր ծնաւ Քրիստոս։

Պ. Բեթղեհեմ քաղաքին մօտ՝ մսուրի մը մէջ։

Հ. Քրիստոսի ծննդեանէն եղաք ի՞նչ անուն դրին անոր։

Պ. Ծննդեան ութերորդ օրը՝ անունը Յիսուս դրին։

Հ. Ո՞վ ըսաւ որ այդ անունը դնեն։

Պ. Գաբրիէլ հրեշտակապետը։

Հ. Ե՞րբ։

Պ. Երբ որ Քրիստոսի ծնանելուն համար Մարիամին աւետիս տուաւ։

Հ. Քրիստոս առաջ որո՞ւ յայտնուեցաւ։

Պ. Հովիւներուն։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Գիշեր ատեն երկինքէն հրեշտակ իջաւ և ըսաւ անոնց.

«Զեզ աւետիք,

«Ծնաւ Փրկիչ,

«Ուրախ եղէ՛ք»։

Հ. Այն հրեշտակէն զատ ուրիշ հրեշտակներ ալ իկան։

Պ. Այո՛, շատ հրեշտակներ իջան ու սկսան երգել.

«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ «եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։

Հ. Հովիւները գացին Քրիստոսը տեսնելու։

Պ. Այո՛, վազեցին Բեթղեհեմ գացին ու Քրիստոսը գտնելով՝ եր կրպագութիւն ըրին նմա։

Հ. Հեթանոսներէն ալ եկողներ եղա՞ն Յիսուսի երկրպագութիւն ընելու։

Պ. Երեք Մոգերը եկան, որոնք իմաստուն ու մեծ ազգաւորի պէս հարուստ մարդիկներ էին։

Հ. Անոնք ո՞ր կողմէն եկան։

Պ. Արեւելեան հեռաւոր երկիրներէ։

Հ. Անոնք ի՞նչպէս գիտցան Քրիստոսի ծնունդը։

Պ. Երկինքը անոր աստղը տեսնելով։

Հ. Ո՞ւր ծնանիլը գիտէի՞ն։

Պ. Զէին գիտեր, անոր համար երբոր Երուսաղէմ հասան՝ սկսան հարցունելու. «Ո՞ւր է նորածին թագաւորը։»

Հ. Հերովդէս լսե՞ց այդ բանը։

Պ. Լսեց ու շատ վախցաւ։

Հ. Մոգերուն բան չըսա՞ւ։

Պ. Անոնց ըսաւ որ նորածին թագաւորը գտնելնէն ետքը՝ իրեն ալ իմացնեն։

Հ. Միտքը ի՞նչ էր։

Պ. Միտքը այն էր որ Յիսուսը սպաննել տայ։

Հ. Ի՞նչու համար այդ չար միտքն ունեցաւ։

Պ. Անոր համար որ չըլլայ թէ Յիսուսը թագաւոր ըլլալով՝ իրեն թագաւորութիւնը ձեռքէն առնէ։

Հ. Մոգերը կրցա՞ն Յիսուսը գտնելու։

Պ. Այո՛. գացին գտան, երկրաստագութիւն ըրին և ընծայ տուին նմա։

Հ. Ի՞նչ ընծայ տուին։

Պ. Ոսկի, խունկ ու զմուռս։

Հ. Եաքը Մոգերը Հերովդէսին քով գացի՞ն։

Պ. Ո՛չ, ուրիշ ճամբով դարձան իրենց տեղը գացին։

Հ. Ո՞վ պատուիրեց անոնց որ անանկ ընեն։

Պ. Հրեշտակը երազներնուն մէջ անոնց երեւնալով՝ խստիւ պատուիրեց որ Հերովդէսին չերթան։

Հ. Հերովդէս չբարկացա՞ւ որ մոգերը գինքը խաբեցին։

Պ. Ի՛նչպէս չէ. անանկ բարկացաւ որ Բեթղեհեմի սահմանին մէջ գտնուած երկու տարեկանէ վար տղաքներուն բոլորն ալ սպաննել տուաւ։

Հ. Ի՞նչ դիտաւորութիւնով այդ անգթութիւնը գործեց։

Պ. Այն դիտաւորութիւնով որ Յիսուս ալ այն տղաքներուն հետ սպաննուի։

Հ. Հերովդէսի այդ դիտաւորութիւնը կատարուեցաւ։

Պ. Ո՛չ, ինչու որ Յիսուս կոտորածէն ազատեցաւ։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Յովսէփ Յիսուսը մօրը հետ առաւ Եգիպտոս փախցուց։

Հ. Ո՞վ պատուիրեց որ այդպէս ընէ։

Պ. Հրեշտակը՝ Յովսէփին երեւնալով երազին մէջ։

Հ. Եգիպտոս ի՞նչքան ատեն մնացին։

Պ. Մինչեւ Հերովդէսի մեռնիլը, այսինքն՝ երկու կամ քսան ամսոյ եօթը տարի։

Հ. Եաքը ո՞ւր գացին։

Պ. Նորէն Հրէաստան դարձան ու Նազարէթի բնակեցան, անոր համար ալ Յիսուս Նազովրեցի կոչուեցաւ։

Քրիստոսի քառասնօրեայ ընծայումը ու Տաճարին մէջ վարդապետելը

Հ. Յիսուսի Տաճարն ընծայուիլը ի՞նչպէս եղաւ։

Պ. Մարիամ Աստուածածին Յիսուսը Տաճար տարաւ ու հետը երկու աստրակ կամ աղաւնիի ճագաստաւ։

Հ. Մարիամ ինչո՞ւ համար հետը աստրակ կամ աղաւնի տարաւ։

Պ. Պատարագ մատուցանելու համար, ինչպէս Մովսիսական Օրէնքին մէջ գրուած է։

Հ. Այն ատենը ի՞նչ երեւելի բան պատահեցաւ։

Պ. Սիմէոն ծերունին Տաճարին մէջն էր ու երբոր Յիսուսը տեսաւ՝ գիրկը առաւ, Աստուծոյ փառք տուաւ ու ըսաւ. «Տէ՛ր, ա-

Հա՛ աչքս տեսաւ Փրկիչն ու հեթանոսներուն լոյսը. ալ ասկէ ետքը թող մեռնիմ»։

Հ. Աստուածածնի ալ բան ըսա՞ւ։

Պ. Այս խօսքերը ըսաւ. «Ահա քու այդ զաւակդ շատ մարդերու կործանումը պատճառ պիտի ըլլայ, և քու սիրտդ սուր պիտի մտնէ»։

Հ. «Քու սիրտդ սուր պիտի մտնէ» ըսելովը ի՞նչ ուզեց յայտնել։

Պ. Սա ուզեց իմացնել թէ որդիկդ չարչարանքն ու հրեաներուն անհաւատութիւնը տեսնելով՝ սիրտդ պիտի վիրաւորուի։

Հ. Յիսուսի փրկիչ ըլլալը Սիմէոնի պէս ուրիշն ալ հասկցա՞ւ։

Պ. Այո՛. Աննա մարգարէն, որ ութսունուչորս տարեկան էր ու Տաճարէն չէր հեռանար, սկսաւ

Աստուծոյ փառք տալ և Յիսուսի փրկիչ ըլլալը քարոզել։

Հ. Յիսուս քիչ մը մեծնալէն ետքը ի՞նչ զարմանալի գործ ցուցուց։

Պ. Երբոր տասներկու տարեկան էր՝ Տաճարին մէջ կարգացող գիտուն մարդերուն բան կը հարցնէր ու կը խօսէր, անա՛նկ իմաստութիւնով որ լսողները կը զարմանային։

ԳԼՈՒԽ Ը.

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ.

Հ. Յիսուս որմէ՞ն մկրտուեցաւ։

Պ. Յովհաննէս Մկրտիչէն։

Հ. Յովհաննէս Մկրտիչ որո՞ւն տղան էր։

Պ. Զաքարիա քահանային ու Եղիսաբէթին։

Հ. Ո՞ւր կը բնակէր։

Պ. Անապատը։

Հ. Ի՞նչպէս կեանք կ'անցնէր։

Պ. Ճգնաւորի ու մարգարէի պէս։

Հ. Ի՞նչ էր կերածը։

Պ. Մարախ ու վայրենի մեղր։

Հ. Հագուստը ինչէ՞ էր։

Պ. Ուղտի բուրդէ։

Հ. Կապած գօտի՞ն։

Պ. Կաշիէ։

Հ. Անապատը ի՞նչ կ'ընէր։

Պ. Կը քարոզէր որ մարդիկ ապաշխարհեն իրենց մեղքերուն համար։

Հ. Ապաշխարողներուն ի՞նչ կ'ընէր։

Պ. Յորդանան գետին մէջ կը մկրտէր զանոնք։

Հ. Յիսուս մեղքերէն սրբուելո՞ւ համար մկրտուիլ ուզեց։

Պ. Ո՛չ, անիկա մեղք չունէր։

Հ. Հապա ինչո՞ւ համար։

Պ. Զուրը սրբելու և Մկրտու-

թեան Խորհուրդը հաստատելու համար։

Հ. Յիսուսի մկրտութեան ատեն ի՞նչ հրաշալի տեսիլք պատահեցաւ։

Պ. Հոգին Սուրբ աղաւնիի կերպարանքով Յիսուսի վրայ իջաւ և երկինքէն ձայն եկաւ. «Դա է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ։»

Հ. Յիսուս մկրտուած ատեն քանի՞ տարեկան էր։

Պ. Երեսուն տարեկան էր։

Յովհաննէս Մկրտիչ

Հ. Հրեաները Յովհաննէս Մկրտիչի վրայ ի՞նչ կարծիք ունեցան։

Պ. Կարծեցին թէ ան է Մեսիան, այսինքն Քրիստոսը որուն համար մարգարէները գրած էին։

Հ. Ի՞նքը իրեն համար ինչ ըսաւ։

Պ. Ըսաւ. «Քրիստոսը ես չեմ, անոր կարապետն եմ։»

Հ. «Կարապետ» ի՞նչ ըսել է։

Պ. Առջեւէն գացող, ճամբայ բացող։

Հ. Յովհաննէս Մկրտիչ ի՞նչ ըսաւ Յիսուսի համար։

Պ. Ըսաւ թէ՝ «Սա է Գառն Աստուծոյ որ աշխարհի մեղքը կը ջնջէ. անոր հաստատողը յաւիտենական կեանք կ'ընդունի ու չհաւատացողը Աստուծոյ բարկութեանը տակ կը մնայ։»

Հ. Յովհաննէս Մկրտիչ Յիսուսը մկրտելէն ետքը ո՞ւր գնաց, ի՞նչ եղաւ։

Պ. Երկու տարիի չափ բանտը մնաց ու ետքը գլխատուեցաւ։

Հ. Ո՞վ գլխատել տուաւ։

Պ. Հերովդէս Անդիպաս որ Գալիլեացւոց աշխարհի չորրորդաս-

պետն էր և առաջին Հերովդէսի որդին։

Հ. Միթէ Յովհաննէսին թշնամին էր։

Պ. Այո՛, ինչու որ Յովհաննէս անոր չար գործերուն համար՝ յանդիմանութիւն ըրած էր իրեն։

Հ. Յովհաննէսին մարմինը ո՞վ թաղեց։

Պ. Իրեն աշակերտները թաղեցին։

ԴԱՍ Դ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Յիսուս մկրտուելէն ետքը ո՞ւր գընաց։

Պ. Երիքովի անապատը գնաց։

Հ. Այն տեղ ի՞նչ ըրաւ։

Պ. Քառասուն օր ծոմ պահեց ու փորձիչ սատանային յաղթեց։

Հ. Ետքը ի՞նչ ըրաւ։

Պ. Սկսաւ աշակերտներ ժողովել, քարոզել ու սորվեցնել։

Հ. Աշակերտներուն գլխաւորները ի՞նչ ըսուեցան։

Պ. «Առաքեալ» ըսուեցան, որ դրկուած ըսել է, ինչու որ ասդին անդին դրկուեցան քարոզութիւն ընելու։

Հ. Առաքեալները քանի՞ էին։

Պ. Տասներկու։

1. Պետրոս.
2. Անդրէաս.
3. Յակոբոս.
4. Յովհաննէս.
5. Փիլիպպոս.
6. Բարթուղիմէոս.
7. Թովմաս.
8. Մատթէոս.
9. Յակոբոս Ալփեան։

10. Ղեբեէոս կամ Թադէոս.
11. Սիմոն Կանանացի.
12. Յուդա Իսկարիովտացի։

Հ. Յիսուս ի՞նչ կը քարոզէր։

Պ. Կը քարոզէր որ մարդիկ ի-ըեն հաւատան, ապաշխարեն, երկ-նից արքայութեան արժանի ըլլա-լու համար առաքինութիւն գոր-ծեն։

Հ. Ի՞նչ է առաքինութիւնը։

Պ. Առաքինութիւն կ'ըսուի ա-մէն գործ որ Աստուծոյ ընդունելի ու մարդոց առջեւ գովելի է։

Հ. Յիսուս իր քարոզութիւններուն մէջ ի՞նչ առաքինութիւններ սորվեցուց։

Պ. Ճշմարտութիւնը սիրել, սուրբ սիրտով զԱստուած ճանչնալ, զայն հոգւով պաշտել, հեզ, խոնարհ, համբերող, եղբայրասէր կամ ըն-

կերասէր ըլլալ, և ասոնց պէս ա-ղէկ բաներ սորվեցուց։

Հ. Ուրիշ ի՞նչ խրատներ տուաւ։

Պ. Կեղծաւորութենէ փախչիլ, հպարտութիւն չընել, ոխ չի պա-հել, բամբասանք չընել, սուտ չի խօսիլ, չի գողնալ, աւելորդ հոգեր չունենալ, եւայլն։

ԳԼՈՒԽ Դ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Յիսուս ի՞նչ հրաշքներ գործեց։

Պ. Հիւանդները բժշկեց, ցա-ւագարները ողջացուց, դիւահար-ները ազատեց, խուլերուն ականջ-ներն ու համրերուն լեզուները բացաւ, կոյրերուն աչքերը լուսա-ւորեց, կաղերը աղէկցուց և ան-դամալոյծները ոտք հանեց։

Հ. Յիսուս ասանկ բժշկութիւններ ընելու ատենը ի՞նչ դեղեր կը գործածէր։

Պ. Դեղ չէր գործածեր, բայց միայն Աստուածային կարողութիւնովը ու հրամանաւը հրաշքեր կ'ընէր, հրամայելով միայն։

Հ. Յիսուսի ցուցուցած հրաշքներուն առաջինը ո՞րն էր.

Պ. Ջուրը գինիի փոխելն էր։

Հ. Այդ հրաշքը ե՞րբ և ո՞ւր ըրաւ։

Պ. Կանա Գալիլեայոց ըսուած քաղաքը, երբոր Յիսուս մօրը հետ մէկտեղ հարսնիքի մը մէջ նըստած էր։

Հ. Ի՞նչպէս եղաւ։

Պ. Հարսնիքին ուրախութեան ատենը գինին պակսելով՝ Մարիամ Յիսուսին յայտնեց, Յիսուս ալ մօրը խօսքը պատուելու համար՝ ծա-

ռաներուն հրամայեց որ դատարկ թափակոյկները ջրով լեցնեն. լեցնելէ ետքը՝ տեսան որ ջուրը պատուական անուշ գինի եղեր էր։

Հ. Թափոյկները քանի՞ հատ էին և ո՞րչափ գինի կրնային պարունակել։

Պ. Վեց հատ էին և ամէն մէկը՝ երկու կամ երեք մար (*) գինի կ'առնէր։

Հ. Յիսուս ուրիշ հրաշքներ ալ ցուցո՞ւց։

Պ. Ի՛նչպէս չէ. ծովուն կատղած ալիքներն ու սաստիկ հողմը դադրեցուց, ծովուն վրայ ոտքով քալեց և երկու անգամ ալ՝ միայն օրհնութեամբ՝ քիչ մը հացը շատցուց։

Հ. Առաջին անգամ քանի՞ հացը շատցուց։

(*) Մար չափի անուն է։

Պ. Հինգ հացն ու երկու ձուկը։

Հ. Հինգ հացն ու երկու ձկները քանի՞ մարդ կերան։

Պ. Հինգ հազար մարդ կերան,

կնիկներէն ու պզտիկ տղաքներէն զատ։

Հ. Կրցա՞ն կշտանալ։

Պ. Այո՛, այնպէս կշտացան՝ որ տասներկու սակտա ալ հացի կտորուանք վերուցին։

Հ. Երկրո՞րդ անգամին քանի հացը շատցաւ։

Պ. Եօթը հաց քանի մը ձկներու հետ։

Հ. Այն հացերէն ու ձկներէն քանի՞ հոգի կերան։

Պ. Կնիկներէն ու պզտիկ տղաքներէն զատ՝ չորս հազար հոգի կերան ու եօթը զամբիւղ լեցուն հացի կտորուանք աւելցաւ։

Հ. Յիսուս մեռած մարդերու ալ յարութիւն տուա՞ւ։

Պ. Այո՛, երեք մեռած մարդ կենդանացուց։

Հ. Այն մեռածները ո՞վ էին։

Պ. Առաջինն էր Յայրոս իշխանին տասներկու տարեկան աղջիկը։

Երկրորդն էր այրի կնկան մը մէկ հատիկ զաւակը, Նային քաղաքի մէջ։

Երրորդն ալ Յիսուսի բարեկամը՝ Ղազարոսն էր, որ Բեթանիա քաղաքը կը նստէր։

Հ. Յիսուս Յայրոսի աղջիկը ի՞նչպէս կենդանացուց։

Պ. Ձեռքէն բռնեց, եբրայեցերէն լեզուաւ «Տալիթա՛, կումի» ըսաւ։

Հ. Այդ խօսքը ի՞նչ կը նշանակէ։

Պ. «Ո՛ աղջիկ, ելի՛ր»։

Հ. Այրի կնկան զաւակը ի՞նչպէս յարոյց։

Պ. Երբոր զանիկա թաղելու կը տանէին, Յիսուս դագաղին մօտեցաւ ու մեռելին ըսաւ. «Քեզ կ'ըսեմ, կանգնէ՛»։ Մեռելը իսկոյն կանգնեցաւ նստաւ։

Հ. Յիսուս Ղազարո՞ն ալ չի թաղուած յարոյց։

Պ. Ոչ, մեռնելէն ու չորս օր թաղուած մնալէն ետքը։

Հ. Ղազարոսը յարուցանելու առենը Յիսուս ի՞նչ ըսաւ։

Պ. «Ղազարէ՛, արի՛ է՛կ արտաքս»։

Հ. Ղազարոս այն ձայնը լսե՞ց։

Պ. Լսեց ու իսկոյն ելաւ կանգնեցաւ (*)։

(*) Ղազարոս նոր կենդանութիւն առնելէն ետքը տասներեքնիգ տարի ալ ապրեցաւ։

Հ. Ձեռքն ու ոտքը կապած չէ՞ն։

Պ. Կապած էին, բայց Յիսուս հրամայեց որ արձակեն։

ԲՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Հ. Յիսուս իւր Աստուածային փառքը ի՞նչ նշանով կամ տեսիլքով աշակերտներուն ցուցուց։

Պ. Թափօր լերան վրայ՝ Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս աշակերտներուն առջեւը այլակերպելով, այսինքն իր կերպարանքը փոխելով։

Հ. Ի՞նչպէս այլակերպեցաւ։

Պ. Երեսը արեւու նման և զգեստները ճիւնի նման փայլուն ու սպիտակ տեսնուեցան։

Հ. Այն տեսիլքին մէջ ուրիշ մարդիկ ալ երեւցա՞ն։

Պ. Այո՛, Մովսէս ու Եղիա մարգարէներն ալ երեւցան։

Հ. Աշակերտներուն հետ խօսեցա՞ն։

Պ. Ո՛չ, միայն Յիսուսի հետ խօսեցան՝ անոր չարչարանաց ու մահուան վրայ։

Հ. Եռքը ի՞նչ եղաւ։

Պ. Լուսաւոր ամպ մ՚իջաւ, զոնոնք ծածկեց ու երկինքէն ձայն մ՚ելաւ. "Դա՛ է Որդի իմ սիրելի, գմա լսարո՛ւք"։

Հ. Աշակերտները երբ այդ տեսան ու լսեցին՝ ի՞նչ եղան։

Պ. Զարմացան, վախցան ու ելան վրայ ինկան, բայց Յիսուս բռնեց կանգնեցուց զանոնք։

Հ. Այդ հրաշալի տեսիլքը երկար տևեց։

Պ. Ո՛չ, ինչու որ աշակերտները կանգնելէն ետքը՝ տեսան որ Յիսուսէ զատ մէկը չի կայ։

ՅԻՍՈՒՍԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Հ. Յիսուսի հրաշքները տեսնողներն ու քարոզութիւնները լսողներն անոր Աստուածութեանը հաւատացի՞ն։

Պ. Ոմանք հաւատացին ու ոմանք չի հաւատացին։

Հ. Չի հաւատացողները ո՞վ էին։

Պ. Անոր թշնամիներն որոնք

էին դպիրները, փարիսեցիները, քահանայապետները, աշխարհասէր իշխանները և ծերերը։

Հ. Դպիրները ո՞վ էին։

Պ. Հրէաներուն վարդապետներն ու կարդացողները։

Հ. Փարիսեցիները ո՞վ էին։

Պ. Փարիսեցի ըսուածները կեղծաւոր, հպարտ, ագահ ու խաբեբայ մարդիկ էին՝ որոնք ինքզինքնին ուրիշներէն աւելի արդար և օրինապահ կը համարէին։

Հ. Ժողովուրդները Յիսուսի պատիւ կուտայի՞ն։

Պ. Ժողովրդոց շատերը, որոնք Յիսուսի հրաշքները տեսած կամ լսած էին, անոր հետեւիլ և անուն փառաւորել կը ցանկային։



Քրիստոսի Երուսաղէմ գալը

ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐՈՒՍԱՂԷՄ ԳԱԼԸ

Հ. Յիսուսի անունը ե՞րբ աւելի հռչակուեցաւ։

Պ. Երբ որ Երուսաղէմ մտաւ՝ նստած էշոյ և աւանակի վրայ։

Հ. Այդ ի՞նչպէս եղաւ։

Պ. Երբ Ժողովուրդը լսեց թէ Յիսուս կուգայ, արմաւենիի և ձիթենիի ճիւղեր ձեռքերնին բռնած առջեւը ելան ու զգեստնին գետնի վրայ փռելով, մեծ ու պզտիկ, սկսան աղաղակել. «Ովսաննա, օրհնեա՛լ որ գայդ յանուն Տեառն, թագաւո՛ր Իսրայէլի»։

Հ. «Ովսաննա» ի՞նչ ըսել է։

Պ. Եբրայեցերէն է և կը նշանակէ «Ով Յեսու կամ Յիսուս, փրկեա՛ զմեզ», և կամ «Փրկութիւն ի բարձանց»։

ԴԱՍՈՒԽ Ե.

ԲՐԻՍՏՈՍԻ ՁԱՐՁԱՐԱՆՔԸ, ՄԱՀԸ ԵՒ ԹԱՂՈՒՄԸ

Հ. Յիսուս իրեն չարչարանքին ու մահուան համար աշակերտներուն առաջուց բան մ'ըսա՞ւ։

Պ. Ըսաւ թէ երկու օրէն ետքը Զատիկ կ'ըլլայ և իրեն չարչարուիլ մեռնիլ պէտք է։

Հ. Ատիկա եղա՞ւ։

Պ. Այո՛. ինչու որ Յիսուսի թշնամիները Կայիափա քահանայապետին տունը ժողվուելով՝ խորհուրդ ըրին որ Յիսուսը բռնեն սպաննեն։

Հ. Յիսուսը ո՞վ մատնեց կամ բռնել տուաւ։

Պ. Յուդա Իսկարիովտացին որ Յիսուսի աշակերտներէն մէկն էր։

Հ. Յուդայի այդպիսի ապերախտութեան պատճառը ի՞նչ էր։

Պ. Իրեն ագահութիւնն ու արծաթասիրութիւնը։

Հ. Ուրեմն Յիսուսի թշնամիները սատա՞կ խոստացեր էին Յուդայի։

Պ. Այո, երեսուն արծաթ խոստացեր էին ու տուին։

Հ. Յիսուս զիսա՞ր որ Յուդա զինքը պիտի մատնէր։

Պ. Գիտէր, բայց չուզեց որ անունը տալով յայտնէ։

Հ. Առանց անունը տալու յայտնե՞ց։

Պ. Այո, Բաղարջակերաց տօնին առաջին երեկոյին, երբոր սեղան նստած էին՝ աշակերտներուն ըսաւ. "Ձեր մէջէն մէկը զիս պիտի մատնէ"։

Հ. Աշակերտները չի հարցուցի՞ն թէ ո՛վ է։

Պ. Հարցուցին և Յիսուս ըսաւ. «Որուն որ պատուս թմոթխեմ տամ՝ ան է»։

Հ. Որո՞ւ տուաւ։

Պ. Յուդային տուաւ ըսելով. «Գնա՛, ինչ որ պիտի ընես՝ շուտով ըրէ՛»։

Հ. Յուդան գնա՞ց նոյն տաւնը։

Պ. Ա՛յո՛, չիտակ քահանայապետներուն ու գրիչներուն քովը

գնաց, խոստացաւ անոնց որ Յիսուսը մատնէ։

Հ. Յիսուս անկէ ետքը ի՞նչ ըրաւ։

Պ. Ակսաւ աշակերտներուն մը-խիթարական խօսքեր ըսել ու պարտիզի մը մէջ առանձնանալով աղօթել։

Հ. Յուդա ի՞նչպէս կատարեց իր չար կամքը։

Պ. Կէս գիշերին քահանայապետին ծառաներուն ու զինուորներուն հետ մէկտեղ Յիսուսի եղած տեղը եկաւ և բռնել տուաւ զայն։

Հ. Յիսուսը ի՞նչ նշանով կրցան ճանչնալ։

Պ. Յուդային ցուցուցած նշանովը։

Հ. Յուդան ի՞նչ նշան ցուցուցած էր ա-ղոնց։

Պ. Նշան ցուցուցած էր թէ ո՛վ

որ ինքը համբուրելու ըլլայ, նա է Յիսուսը։

Հ. Յուդա երբոր Յիսուսը համբուրեց, Յիսուս ի՞նչ ըսաւ անոր։

Պ. Այս խօսքը. «Յուդա՛, դու զիս համբուրելո՞վ կը մատնես»։

Հ. Յուդան իր ըրած անօրէն գործին համար չի ղղջա՞ց։

Պ. Ղղջաց և առած արծաթը տարաւ քահանայապետներուն տուաւ ըսելով. «Ես մեղք գործեցի և արդար արիւնը մատնեցի»։

Հ. Քահանայապետները ի՞նչ պատասխան տուին անոր։

Պ. «Դո՛ւն գիտես, ըսին, ասիկա մեզի հոգ չէ»։

Հ. Յուդա թողութիւն խնդրե՞ց Յիսուսէն։

Պ. Ո՛չ, բոլորովին յուսահատած՝ արծաթը Տաճարին մէջ ձգելէն

ետքը՝ գնաց ինքզինքը կախեց ու հոգւով մարմնով կորսուեցաւ։

Հ. Քահանայապետները առի՞ն այն արծաթը։

Պ. Առին, բայց որովհետեւ արեան գին էր՝ արժան չի սեպեցին Տաճարին գանձանակը ձգելու, այլ անով պղտիկ տեղ մը ծախու առին՝ օտարականներու գերեզմանոց շինելու համար։

Հ. Երբոր Յիսուսը բռնելու եկան, աշակերտները ի՞նչ ըրին։

Պ. Թշնամիներուն հետ կռուիլ ուզեցին. Պետրոս ալ Մաղքոսին ականջը սրով զարկաւ կտրեց։

Հ. Յիսուս ատանկ վրէժխնդրութեան յօժարութիւն ունէ՞ր։

Պ. Ո՛չ. ուստի և աշակերտներուն ըսաւ. «Սուրերը տեղը դրէ՛ք. ես

եթէ ուզելու ըլլամ, երկինքէն տաներկու գունդէն աւելի հրեշտակ իջեցնելու կարող եմ»։

Հ. Մաղքոսը ո՞վ էր։

Պ. Քահանայապետին ծառան էր։

Հ. Անոր ականջը կարա՞ծ մնաց։

Պ. Ո՛չ, վասն զի Յիսուս իսկոյն աղէկցուց։

Հ. Յիսուսը բռնելէն ետքը ո՞ւր տարին։

Պ. Նախ Անանա քահանայապետին ու ետքը Կայիափա քահանայապետին քովը տարին որ դատուի։

Հ. Յիսուսի աշակերտները ի՞նչ եղան։

Պ. Փախան ցրուեցան, մինակ Պետրոս ու Յովհաննէս Յիսուսի ետեւէն գացին ու Կայիափային տունը մտան։

Հ. Պետրոսին այն ատեն ի՞նչ պատահեցաւ։

Պ. Իրեն Յիսուսի աշակերտ ըլլալը երեք անգամ ուրացաւ, ինչպէս որ Յիսուս առաջուց ըսած էր։

Հ. Ետքը Պետրոս չի զղջա՞ց։

Պ. Զղջաց ու շատ արցունք թափեց։

Հ. Կայիափայի տունը ի՞նչքան ատեն մնաց Յիսուս։

Պ. Բոլոր գիշերը այն տեղ պահեցին և երեսը թքնելով, ապտակ

զարնելով, ծաղր ընելով՝ շատ չար-
չարեցին զինքը։

Հ. Առաուն Յիսուսը ո՞ւր տարին։

Պ. Պիղատոսին քովը։

Հ. Ինչո՞ւ համար։

Պ. Մեռցնելու հրաման առնելու համար։

Հ. Պիղատոս ո՞վ էր։

Պ. Հիւսիսատանի դատաւոր էր, Հռովմայեցիներուն կողմէն դրուած։

Հ. Ո՞ւր տեղացի էր։

Պ. Պոնտացի էր։

Հ. Պիղատոս շուտով հրաման տուա՞ւ Յիսուսը մեռցնելու։

Պ. Ո՛չ, քննեց խմացաւ որ Յիսուս անմեղ է, բայց Հերովդէսի քով դրկեց որ ան ալ քննէ։

Հ. Հերովդէս ի՞նչ ըրաւ։

Պ. Յիսուսի քանի մը բան հարցուց և ուզեց որ Յիսուս իր առջեւը հրաշք գործէ։

Հ. Յիսուս անոր կամքը կատարե՞ց։

Պ. Ո՛չ, վասնզի ո՛չ հրաշք գործեց և ո՛չ հարցմունքներուն պատասխան տուաւ։

Հ. Ե՞տքը։

Պ. Հերովդէս Յիսուսի լուռ կենալուն վրայ բարկանալով, վրան ճերմակ լաթ մը ձգել տուաւ և նորէն Պիղատոսի քով դրկեց։

Հ. Պիղատոս այն ատեն Յիսուսը ազատելու համար հնարքներ չգործածե՞ց։

Պ. Շատ հնարքներ գործածեց, բայց օգուտ չըրաւ։

Հ. Ի՞նչու համար։

Պ. Անոր համար որ Յիսուսի թշնամիները շատ կատղած ըլլալով, ամէնքը մէկ բերան կը պոռային

«Ի խաչ հա՛ն, ի խաչ հա՛ն զդա»։

Հ. Երբոր Պիղատոս այդ խօսքը լսեց, ի՞նչ ըրաւ։

Պ. Բազմութեան առջեւը ջրով ձեռքերը լուաց ու ըսաւ. «Ես այդ արդար մարդուն արիւնէն քաւեալ եմ»։

Հ. Հրեաները ի՞նչ պատասխանեցին։

Պ. Պատասխանեցին. «Ատոր արիւնը մեր ու մեր զաւակներուն վրայ թո՛ղ ըլլայ»։

Հ. Ուրեմն Պիղատոս հրաման տուա՞ւ Յիսուսը սպաննելու։

Պ. Այո՛։

Հ. Ինչպէս սպաննեցին Յիսուսը։

Պ. Խաչը հանելով։

Հ. Ո՞ւր տեղ։

Պ. Քաղաքէն դուրս, Գողգոթա ըսուած տեղը։

Հ. Յիսուսի Խաչը ո՞վ տարաւ Գողգոթա։

Պ. Առաջ Յիսուսի կռնակը դրին, ետքը Սիմոն Կիւրենացիին (*) տուին որ ան տանի։

Հ. Ինչո՞ւ համար այդպէս բրին։

Պ. Անոր համար որ վախցան թէ

չըլլայ որ Յիսուս խաչը չի հանուած ճամբան մեռնի։

(*) Սիմոն Կիւրենացին Հրեայ չէր, այլ օտար ազգէ ու պանդուխտ էր. այն ատենը իր ագարակէն քաղաք կուգար։ Մարկոս, ԺԵ. Գլ. 21 Համար։

Հ. Յիսուսի հետ ուրիշ մարդ ալ խաչը հանեցին։

Պ. Այո՛, երկու մարդ ալ խաչը հանեցին, մէկը Յիսուսի աջ կողմը և միւսը ձախ կողմը։

Հ. Ինչ մարդիկներ էին անոնք։

Պ. Երկուքն ալ չարագործ ասողներ էին. բայց մէկը, որ Յիսուսի աջ կողմն էր, Աբքայութեան արժանի եղաւ։

Հ. Ինչպէս արժանի եղաւ։

Պ. Երբոր միւս ընկերը խաչին վրայէն Յիսուսի նախատինք կ'ընէր, ինքը յանդիմանեց զայն և Յիսուսի սասուածութեանը հաւատալով՝ ըսաւ. «Տէ՛ր, ի՞նչ ատեն որ քու թագաւորութիւնովդ գաս՝ զիս յիշէ՛»։ Յիսուս ալ անոր ըսաւ. «Այսօր իմ հետս Աբքայութեան մէջ պիտի ըլլաս»։

Հ. Երբոր Յիսուսը խաչը հանեցին, անոր հանդերձները ի՞նչ ըրին։

Պ. Զինուորները տարին իրենց մէջ բաժնեցին՝ չորս կտոր պատռելով։

Հ. Պատմուճանն ալ պատռեցի՞ն։

Պ. Ո՛չ, պատմուճանը հիւսուած ու առանց կարի ըլլալուն համար՝ անոր վրայ վիճակ ձգեցին։

Հ. Յիսուսի խաչին գլխուն վրայ ի՞նչ գրուած էր։

Պ. Պիղատոս այս խօսքերը գրել տուած էր. «Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից»։

Հ. Ո՞ր ազգի լեզուաւ կամ գրով։

Պ. Եբրայեցերէն, Դաղմատերէն (այսինքն Լատիներէն) ու Յունարէն։

Հ. Յիսուսի՝ խաչին վրայ եղած ատենը՝ ի՞նչ չարչարանք տուին։

Պ. Երբոր Յիսուս «Ծարաւի եմ» ըսաւ, Ջուրի տեղ՝ լեղիով խառնած քացախ տուին։

Հ. Յիսուս իր հոգին ի՞նչպէս աւանդեց։

Պ. Բարձր ձայնով սա խօսքերը ըսելով. «Հա՛յր, հոգիս քու ձեռքդ կ'աւանդեմ»։

Հ. Յիսուսի խաչին վրայ եղած տեղը՝ մահուան ժամուն՝ ի՞նչ երեւելի նշաններ եղան անոր աստուածութիւնը յայտնելու համար։

Պ. Արեգակը կարգէ դուրս խաւարեցաւ, Տաճարին վարագոյրը վերէն վար ինքնիրեն պատռեցաւ, ապառաժ քարերը ճեղքուեցան, գերեզմանները բացուեցան և մեռելները ոդջացան։

Հ. Ուրիշ ի՞նչ եղաւ։

Պ. Զինուորներէն մէկը նիզակով Յիսուսի կողը ծակեց ու մէջէն արիւն ու ջուր վազեց։

Հ. Ինչո՞ւ համար ըսիր որ արեգակը կարգէ դուրս խաւարեցաւ։

Պ. Անոր համար որ այն ատեն լուսնի լրումն ըլլալով, արեգական խաւարելուն ատենը չէր (*)։

Հ. Յիսուսի մարմինը քանի՞ ժամ խաչին վրայ մնաց։

Պ. Երեք ժամէն աւելի կամ չորս ժամու չափ (**)։

Հ. Յիսուսը ո՞վ խաչէն վար առաւ։

Պ. Յովսէփ Արեմաթացին ու Նիկոդիմոս։

Հ. Ասոնք ի՞նչպէս մարդիկ էին։

(*) Արեգաիան խաւարումը բնականապէս լուսնի ծննդեան ժամանակը կը պատահի։

(**) Յիսուս վեցերորդ ժամուն, այսինքն կէս օրի մօտ խաչեցաւ, իններորդ ժամուն հոգին աւանդեց ու անկէ ետքը թաղուեցաւ։

Պ. Հրէից իշխաններ և Յիսուսի ծածուկ աշակերտներ էին։

Հ. Յիսուսի մարմինը ո՞ւր թաղեցին։

Պ. Յովսէփ Արեմաթացին պարտ-

տէզը, նոր փորած քարէ գերեզմանին մէջ։

Հ. Հրեաները Յիսուսը թաղելէն ետքը ի՞նչ գուշակութիւն ըրին։

Պ. Գերեզմանին դրան քարը

կնքեցին ու քովը պահապան զինուորներ դրին, որ չըլլայ թէ Յիսուսի մարմինը գողցուի։

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Հ. Յիսուս Բաղարջակերաց տօնին առջի երիկունը ի՞նչ խորհուրդ աւանդեց։

Պ. Սուրբ Հաղորդութեան խորհուրդը՝ որով իր Մարմինն ու Արիւնը աշակերտներուն տուաւ։

Հ. Մարմինը ի՞նչպէս տուաւ։

Պ. Հացը առաւ, օրհնեց, կըտրեց և աշակերտներուն բաժնեց՝ ըսելով. «Առէ՛ք, կերէ՛ք. ա՛յս է իմ մարմինս»։

Հ. Արիւնը ի՞նչպէս տուաւ։

Պ. Գաւաթով գինի՛ առաւ, օրհնեց ու ըսաւ. «Արբէ՛ք ի սմանէ, ա՛յս է իմ արիւնս»։

Հ. Յիսուս իր աշակերտներուն պատուիրեց որ անոնք ալ այս Խորհուրդը կատարեն։

Պ. Այո՛. «Ասիկա ըրէք զիս յիշելու համար», ըսաւ։

ՈՏՆԼՈՒԱՑ

Հ. Յիսուս Ս. Հաղորդութեան Խորհուրդը աւանդելէն առաջ ի՞նչ առաքինութեան օրինակ ցուցուց։

Պ. Խոնարհութեան։

Հ. Ի՞նչպէս։

Պ. Զրուվ լեցուն կոնքի մէջ աշակերտներուն ոտքերը լուալով։

Հ. Լուալէն ետքը ի՞նչ պատուէր տուաւ։

Պ. «Ինչպէս որ ես ձեզի ըրի, անանկ ալ դուք իրարու ըրէք», ըսաւ։

ԴԼՈՒԽ Զ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՑԱՐՈՒԹԻՒՆԸ

Հ. Յիսուս ե՞րբ յարութիւն առաւ։

Պ. Մահուան երրորդ օրը, այսինքն դէպ ի լոյս Կիւրակէի։

Հ. Գերեզմանի պահապանները ի՞նչ եղան։

Պ. Անանկ վախցան ու սարսափեցան, որ մեռելի պէս գետնի վրայ փռուեցան։

Հ. Ո՞վ վախցուց զանոնք։

Պ. Հրեշտակը՝ որ յանկարծ մահաւոր լուսափայլութեամբ երկինքէն իջաւ, գերեզմանի դրան քարը գլորեց ու վրան նստաւ։

Հ. Յիսուսի յարութեան համբաւը շուտ տարածուեցա՞ւ։

Պ. Այո՛, ինչու որ պահապաններուն մէկ քանին վազեցին քա-

զաքը գացին ու քահանայապետներուն պատմեցին։

Հ. Քահանայապետները այդ բանը որ լսեցին, ի՞նչ ըրին։

Պ. Յիսուսի յարութիւնը ուրացուցնելու համար պահապաններուն շատ տակ տուին որ ըսեն թէ Յիսուսի աշակերտները գիշերը եկան մարմինը գողցան, երբոր իրենք քնացած էին։

Հ. Յիսուս յարութիւն առնելէն ետքը որո՞ւ երեւցաւ։

Պ. Առաջ Մարիամ Մագդալենացիին, ետքը ուրիշներուն և շատ անգամ իր աշակերտներուն, մինչեւ քառասուն օր։

Հ. Աշակերտներուն ի՞նչ պատուէր տուաւ։

Պ. Պատուիրեց որ երթան բոլոր աշխարհ Աւետարանը քարոզեն ու հաւատացողները մկրտեն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

ԳԼՈՒԽ Է.

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Հ. Յիսուս ե՞րբ համբարձաւ։

Պ. Իւր յարութենէն ետքը՝ քառասներորդ օրը։

Հ. Ո՞ւր տեղէն համբարձաւ։

Պ. Զիթենեաց լեռնէն որ մօտ է Երուսաղէմի և Բեթանիայի։

Հ. Ո՞վ տեսաւ Յիսուսի համբառնալը։

Պ. Անոր աշակերտները տեսան։

Հ. Յիսուս համբառնալու ատենը անոնց ի՞նչ խոստացաւ։

Պ. Զանոնք մխիթարելու և զօրացնելու համար՝ Հոգին Սուրբը ղրկելու խօսք տուաւ։

Հ. Յիսուսի համբարձումը ի՞նչպէս եղաւ։

Պ. Յիսուս իր աշակերտները առաւ Զիթենեաց լեռը տարաւ և հոն զանոնք օրհնելէն ետքը՝ եր-

կինքը եկաւ և ամպերուն մէջէն անցնելով աներեւոյթ եղաւ։

Հ. Ուրիշ ի՞նչ տեսիլք եղաւ հոն։

Պ. Երբոր աշակերտներն աչքերնին տնկած դէպ ի երկինք կը նայէին, անոնց երկու հրեշտակ երեւցան մարդու կերպարանքով՝ ճերմակ լաթեր հագած։

Հ. Այն հրեշտակները աշակերտներուն բան մ՚ ըսին։

Պ. Այո՛. «Ո՛վ Գալիլիացիք, ի՞նչ զարմացած երկինքը կը նայիք. այս Յիսուսը, որ համբարձաւ, դարձեալ օր մը պիտի գայ իւր փառօք»։

Հ. Հիմա ո՞ւր է Յիսուս։

Պ. Հօր Աստուծոյ աջ կողմը նստած է, իւր աստուածային յաւիտենական փառաց մէջ։



Համբարձումն Քրիստոսի

Ա. ՔՐԻՍՏՈՍԻ ՎՃՌԱԿԱՆ ԽՕՍՔԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Հ. Երբոր Հրեաները Յիսուսը բամբասեցին Մատթէոս մաքսաւորի տունը կերակուր ուտելուն համար, Յիսուս ի՞նչ ըսաւ։

Պ. «Առողջ մարդերու բժիշկ հարկաւոր չէ, ըսաւ. անանկ ալ ես եկած եմ ոչ թէ արդարները՝ հապա մեղաւորները կանչելու համար»։

Հ. Երբոր Հրեաները հարցուցին Յիսուսի թէ շաբաթ օրը բժշկութիւն ընել արժա՞ն է, Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ։

Պ. «Եթէ ձեր ոչխարը փոսի մէջ ինկած ըլլայ, շաբաթ օրը դուրս չէ՞ք հաներ, ըսաւ. եթէ այդ արժան է, ապա ուրեմն մարդ բժշկելն ալ արժան է»։

Հ. Երբոր Յովհաննէս Մկրտչին հրամանաւը անոր աշակերտներէն երկուքը եկան Յիսուսի հարցուցին՝ «Դո՞ւ ես Մեսիան թէ ուրիշի սպասենք», Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ։

Պ. «Գնացէ՛ք, ըսաւ, պատմեցէ՛ք. ահա կոյրերը կը տեսնեն, կաղերը կը քալեն,

բորոտները կը սրբուին, խուլերը կը լսեն, մեռելները կը կենդանանան, եւայլն»։

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները անոր հարցուցին թէ ի՞նչ է պատճառը որ մենք բժշկած դիւահարներդ չի կրցանք բժշկել, Յիսուս ի՞նչ ըսաւ։

Պ. «Անոր պատճառը ձեր թերահաւատութիւնն է, ըսաւ. եթէ մանանեխի հատի չափ հաւատք ունենաք և լերան ըսէք «Տեղէդ ելի՛ր», կ'ելնէ և ձեզ համար անկարելի բան մը չ'ըլլար»։

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները ուզեցին գիտնալ թէ Արքայութեան մէջ իրենց մէջէն ո՞վ մեծ պիտի ըլլայ. Յիսուս ի՞նչ ըսաւ։

Պ. Պզտիկ տղայ մը կանչելով՝ անոնց յուցուց ու ըսաւ. «Եթէ դուք այս տղային պէս խոնարհ ու անմեղ չ'ըլլաք, Արքայութիւն չէք կրնար մտնել. ո՛վ որ անոր պէս ինքզինքը կը խոնարհեցնէ, նա է մեծ Արքայութեան մէջ»։

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները մանր տղաքը չէին ձգեր Յիսուսի մօտենալ որ նեղութիւն չտան իրեն, Յիսուս ի՞նչ ըսաւ։

Պ. «Թող տուէ՛ք որ գան, Արքայութիւնը ատանկներունն է», ըսաւ ու տղաքը գիրկը առնելով օրհնեց։

Հ. Երբոր Հրեաները Տաճարին սրահին մէջ Յիսուսի ըսին. «Եթէ դու ես Մեսիան, յայտնէ՛ մեզի», Յիսուս ի՞նչ ըսաւ։

Պ. «Ես յայտնած եմ, ըսաւ, ու իմ գործերս կը վկայեն որ ես Որդի Աստուծոյ եմ, բայց դուք չէք ուզեր հաւատալ՝ ինչու որ ոչխարներէս չէք»։

Հ. Երբոր հարուստ երիտասարդ մը հարցուց Յիսուսի թէ Արքայութիւն երթալու համար ի՞նչ պէտք է գործել, Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ։

Պ. «Աստուծոյ պատուիրանքը պահէ», ըսաւ։ Բայց երբոր երիտասարդը յայտնեց թէ տղայութեան ատենէն միշտ պատուիրանապահ եղած է, Յիսուս անոր սա՛ խրատն ալ տուաւ. «Եթէ կատարեալ ըլլալ կ՚ուզես՝ բոլոր հարստութիւնդ աղքատներուն տո՛ւր ու ետեւէս եկո՛ւր։» Այս խօսքը երիտասարդին շատ ծանր երեւցաւ, անոր համար գը-

լուխը կախելով գնաց։ Այն ատեն Յիսուս ըսաւ. «Աւելի հեշտ է հաստ չուանին ասեղի ծակէն անցնելը, քան թէ հարուստ մարդուն Արքայութիւն մտնելը»։

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները զարմացան անոր անիծած թզենիին չուտով չորնալուն համար, Յիսուս անոնց ի՞նչ ըսաւ։

Պ. «Դուք ալ, ըսաւ, եթէ հաւատք ունենաք ու չերկմտիք, ամէն բան կրնաք ընել. եթէ լերանը ըսէք ելի՛ր ծովը ինկի՛ր, կ՚իյնայ»։

Հ. Երբոր քահանայապետներն ու դպիրները Յիսուսի հարցուցին. «Դու ո՞ր իշխանութիւնով կը քարոզես ու կը սորվեցնես կամ թէ ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը», Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ։

Պ. «Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, ըսաւ, և դուք պատասխան տուէ՛ք. Յովհաննէս Մկրտչի մարդ մկրտելը Աստուծմէ՞ էր թէ մարդոցմէ»։ Եւ որովհետեւ անոնք այս բանիս վրայ մտածելէն ետքը «Չենք գիտեր» ըսին, Յիսուս ալ զանոնք պապանձեցուց հե-

տեւեալ պատասխանով. «Ուրեմն ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ո՞ր իշխանութիւնով այս բանը կ'ընեմ»։

Հ. Երբոր Փարիսեցիներն ու Սադուկեցիները չարամտութեամբ հարցուցին Յիսուսի թէ Հռովմայեցւոց կայսեր հարկ տալ պէտք է թէ ոչ, Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ։

Պ. Դահեկան մը բերել տուաւ ու հարցուց. «Ասոր վրայի եղած պատկերը կամ գիրը որո՞ւնն է»։ Երբոր ըսին «Կայսերն է», «Դացէ՛ք ուրեմն, ըսաւ, կայսերը կայսեր տուէ՛ք ու Աստուծոյնը՝ Աստուծոյ»։

Հ. Երբոր Յիսուս տեսաւ թէ այրի կնիկ մը Տաճարին գանձանակին մէջ երկու լումայ ձգեց, անոր համար ի՞նչ ըսաւ։

Պ. «Այս կնիկը, ըսաւ, ամէն ստակ ձրգողներէն աւելի ձգեց, ինչու որ անոնք իրենց հարստութեան աւելորդը ձգեցին, բայց սա իւր բոլոր ունեցածը ձգեց»։

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները Տաճարին գեղեցիկ քարերուն ու շինութեանը վրայ կը զարմանային, Յիսուս ի՞նչ ըսաւ անոնց։

Պ. «Ատեն մը պիտի գայ, ըսաւ, որ այդտեղ քար քարի վրայ չպիտի մնայ»։

Հ. Երբոր Պետրոս Յիսուսը Որդի Աստուծո՞ դաւանեցաւ, Յիսուս ի՞նչ ըսաւ։

Պ. «Երանի՜ քեզ, ըսաւ, Սիմոն որդի Յովհաննու, ինչու որ մարմինդ ու արիւնդ չի յայտնեց քեզի այդ բանը, հապա իմ Հայրս որ երկինքն է. դու վէմ ես ու ես այդ վէմին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս և դժոխքի դուռները զանիկա յաղթահարելու կարող չպիտի ըլլան»։

Հ. Երբոր Կայիափա քահանայապետը հարցուց Յիսուսի. «Դու Աստուծոյ որդի՞ ես», Յիսուս ի՞նչ պատասխանեց։

Պ. «Դո՛ւ ըսիր, ըսաւ, ու վերջին դատաստանին օրը իմ փառքս պիտի տեսնէք»։

Հ. Երբոր Փարիսեցիներն ու Դպիրները Յիսուսի հարցուցին. «Ինչո՞ւ համար քու աշակերտներդ չի լուացուած ձեռքով հաց կ'ուտեն», Յիսուս ի՞նչ պատասխան տուաւ։

Պ. «Անլուայ ձեռքով հաց ուտելը, ըսաւ, չի պղծեր, բայց սրտի մէջ եղած չար խորհուրդները կը պղծեն»։

Հ. Երբոր Յիսուսի աշակերտները հարցուցին թէ իւր երկրորդ անգամ գալը կամ աշխարհիս վերջը ե՞րբ պիտի ըլլայ, Յիսուս ի՞նչ ըսաւ։

Պ. «Ձեզի հարկաւոր չէ, ըսաւ, այդ բանը գիտնայ որ Հայր Աստուծոյ կամքէն կախուած է. բայց ա՛յն ժամանակ պիտի ըլլայ, երբոր ամենեւին մէկը չի կարծեր»։

Բ. ՔՐԻՍՏՈՍԻ ԸՍԱԾ ԱՌԱԿՆԵՐԸ

Հ. Ի՞նչպէս է երկու պարտապաններուն առակը զոր Յիսուս խօսեցաւ։

Պ. Երկու հոգի մէկ մարդու պարտական էին, մէկը հինգ հարիւր դահեկան պարտք ունէր և միւսը յիսուն։ Առնելիքի տէրը երկուքին պարտքն ալ բաշխեց։ Այս երկու պարտապաններուն ո՞րը պէտք է աւելի սիրէ առնելիքին տէրը։ Ցայտնի է թէ նա որուն պարտքը աւելի էր։ (Ղուկ. Է. Գլ. 44—43 հմր.)։

Հ. Յիսուս ինչո՞ւ համար այս առակը խօսեցաւ։

Պ. Հասկցնելու համար թէ շատ մեղքի տէր մարդն ալ թողութիւն կը գտնէ, եթէ

Աստուծոյ մեծ սէր ու ջերմեռանդութիւն ունենայ։

Հ. Երկրագործին առակը ի՞նչպէս խօսեցաւ Յիսուս։

Պ. Երկրագործին մէկը սերմ կը ցանէր. սերմերէն ո՛րը ճամբուն վրայ իյնալով՝ թռչունները կերան, ո՛րը քարոտ տեղ ինկաւ՝ արմատ չի բռնեց չորցաւ, ո՛րն ալ փուշերուն մէջը մնալով խեղդուեցաւ. բայց աղէկ ու փափուկ հողոյ վրայ ինկածները ծլեցան ու պտղաբեր եղան և մէկ հատի տեղ երեսուն, վաթսուն, մինչեւ հարիւր հատ տուին։

Հ. Յիսուս այս առակը բացատրե՞ց։

Պ. Այո՛. սերմերը Աստուծոյ պատուիրանքն են. գետինները մարդկանց սիրտերն են. անհաւատ, թուլահաւատ, աշխարհասէր ու փառասէր մարդերը առաքինութիւն չեն կրնար գործել, բայց բարի և ջերմեռանդ սիրտ ունեցողները Աստուծոյ պատուիրանքը ուրախութեամբ մտիկ ընելով՝ համբերութեամբ շատ առաքինական պտուղներ կուտան։

Հ. Անգութ ծառային առակը ի՞նչպէս է։

Պ. Թագաւոր մը իմացաւ որ իր ծառաներէն մէկը իրեն տասը հազար քանքար պարտք ունի և հրամայեց որ տնով տեղով ծախեն յիշեալ ծառան ու պարտքը վճարել տան։ Ծառան թագաւորին ոտքն ինկաւ ու աղաչեց որ իրեն ժամանակ տայ պարտքը հատուցանելու։ Թագաւորն ալ մեղքնալով՝ բոլոր առնելիքը բաշխեց։ Նոյն ծառան ուրիշ մարդէ մը հարիւր դահեկան առնելիք ունէր. պարտապանը աղաչեց որ քիչ մը համբերէ ու առնելիքը չի պահանջէ։ Բայց ծառան մտիկ չըրաւ ու բռնեց պարտապանը բանտ դրաւ։ Ծառային ընկերները խեղճին վրայ ցաւելով՝ գացին այս անգթութիւնը թագաւորին յայտնեցին։ Թագաւորը ծառան կանչեց ու ըսաւ. «Ծառա՛յ չար, ես քու աղաչանքիդ համար տասը հազար քանքար պարտքդ չի պահանջեցի, պէտք չէ՞ր որ դուն ալ հարիւր դահեկան առնելիքդ չի պահանջէիր»։ Ետքը հրամայեց որ ծառան

բանտը դնեն մինչեւ որ բոլոր պարտքը վճարէ (Մատթ. ԺԸ. Գլ. 23—24 հմր.)։

Հ. Յիսուս այս առակով ի՞նչ ուզեց յայտնել։

Պ. Իմացնել ուզեց որ Աստուած ալ մեր մեղքերը չի ներեր, եթէ մենք իրարու յանցանքը չի ներենք։

Հ. Սամարացիին առակը Յիսուս ի՞նչպէս խօսեցաւ։

Պ. Մարդուն մէկը Երուսաղէմէն Երիքով երթալու ատենը՝ աւազակներու հանդիպելով վիրաւորուեցաւ ու ճամբուն վրայ կիսամեռ ինկաւ։ Այն տեղէն առաջ քահանայ մ'անցաւ, ետքը Ղեւտացի մը. երկուքն ալ վիրաւորեալը տեսան, բայց առանց օգնելու ձգեցին գացին. վերջը Սամարացի մ'եկաւ, գետինը ինկած վիրաւորը վերցուց, վէրքը կապեց, ձիուն վրայ դրաւ զայն և մինչեւ պանդոկը տարաւ հասցուց. պանդոկապետին ալ երկու դահեկան տուաւ որ վիրաւորը դարմանելու հոգ տանի ու ըսաւ. «Եթէ աւելի ծախք հարկաւորելու ըլլայ, դուն ըրէ՛ ու ես նորէն տեղս դառնալու ա-

տեն քեզի կը վճարեմ» (Ղուկ. Ժ. Գլ. 29—35 հմր.)։

Հ. Յիսուս այս առակը պատմելով ինչ իմացնել ուզեց։

Պ. Հասկցնել ուզեց թէ մարդիկ մարդասէր ըլլալ ու ցաւակցաբար ընկերին օգնել պարտին և բարեգործութիւն ընելու կարողութիւն ունեցող մարդը՝ եթէ ձեռքէն եկած բարի գործը ընել չուզէ, մեղք կը գործէ։

Հ. Հարիւր ոչխարներուն առակը ինչպէս պատմեց Յիսուս։

Պ. Եթէ մարդ մը հարիւր ոչխար ունենայ ու ոչխարներէն մէկը մոլորի՝ չէ՞ մի որ իններսուն ու ինը ոչխարը լեռնելու վրայ կը թողու ու կ'երթայ մէկ մոլորեալը փնտռելու, և եթէ գտնելու ըլլայ՝ այն մէկ հատին վրայ աւելի ուրախ կ'ըլլայ, քան թէ իններսուն ու իններին (Մատթ. ԻԸ. Գլ. 12—13 հմր.)։

Հ. Այս առակով ինչ հասկցնել ուզեց Յիսուս։

Պ. Ինքը աշխարհ եկած է որ մեղքով

մոլորուած կորսուած մարդերը դարձնէ և Հօր Աստուծոյ կամքը ա՛յն է որ ամենեւին մարդ մը չի կորսուի ու եթէ մէկ մեղաւոր մը դարձի գալով մեղքերէն ազատի՝ Աստուած ուրախ կ'ըլլայ։

Հ. Անառակ որդւոյն առակը ինչպէս պատմեց Յիսուս։

Պ. Մարդ մը երկու որդի ունէր։ Պզտիկ որդին հօրմէն իր ժառանգութեան բաժինը խնդրեց առաւ ու հեռի քաղաք մ'երթալով, անա՛նկ անառակ կեանք վարեց որ բոլոր ունեցածը փճացուց. ուստի գնաց ուրիշ մարդու քով խոզարած (խոզի հովիւ) եղաւ, բայց այնքա՛ն ողորմելի էր որ խոզերուն կերած այծեղջիւրին ալ կարօտ կը մնար։ Ասանկ խեղճութեան մէջ՝ միտքը բերաւ իր հօրը ծառաները որ հանգիստ կեանք կը վարէին ու բանի կարօտութիւն չունէին. յոյսը չի կտրեց, ելաւ նորէն հօրը տունը դարձաւ՝ ազատելու համար որ զինքը իբրեւ ծառայ ընդունի։ Հայրը հեռուէն որդին տեսնելուն պէս՝ վազեց եկաւ առջեւը ու

վիզը փաթթուեցաւ։ Որդին ամչնալով՝ ըսաւ. «Մեղա՜յ, հա՛յր, քու զաւակդ ըլլալու արժանի չեմ, ծառայի տեղ ընդունէ՛ զիս»։ Հայրը աւելի գթալով՝ անոր աղուոր լաթեր հագցուց, գիրցուցած եզը մորթել տուաւ և ուրախութեան սեղան պատրաստեց՝ կորսուած տղան գտնելուն համար։ Այն միջոցին՝ մեծ տղան ալ ագարակէն դարձաւ տուն եկաւ, բայց ուրախանալու տեղը՝ տրտնջալ, բարկանալ սկսաւ ու հօրը ըսաւ. «Այսչափ ժամանակ է որ քեզի հնազանդ եմ եղած և դուն ինծի ուլ մը անգամ չես տուած, բայց հիմա այս որդւոյդ համար՝ որ անառակութեամբ քու ստացուածքդ փճացուց՝ գիրցուցած եզդ մորթել տուիր»։ Հայրը պատասխան տուաւ. «Որդեա՛կս, իմ՝ ամէն ունեցածներս քուկդ են. բայց այս զաւակս կորսուած էր գտնուեցաւ, և անոր համար ուրախանալ պէտք է» (Ղուկ. ԺԵ. Գլ. 11—32 հմր.)։

Հ. Յիսուս ինչո՞ւ համար այս առակը ըսաւ։

Պ. Ցուցնելու համար թէ Աստուած ա-

նանկ ողորմած է որ մեղաւորին կորսուիլը չուզէր, հապա անոր դարձի գալը կ'ուզէ և սրտով զղջալով մեղաւորին յանցանքը կը ներէ։

Հ. Տնտեսին առակը գիտե՞ս։

Պ. Այո՛. հարուստ մարդ մը լսելով որ իրեն տնտեսը աւելորդ ծախքեր ըրած է, ուզեց որ իւր պաշտօնէն հանէ։ Տնտեսը մտածեց որ ետքը ապրուստի կարօտ պիտի ըլլայ, իրեն տիրոջը պարտականները կանչեց ու անոնց պարտքերուն մէյմէկ մասը պակսեցուց։ Տէրը երբոր լսեց անոր ասանկ խելացութիւնը, գովեց զայն (Ղուկ. ԺԶ. Գլ. 1—8 հմր.)։

Հ. Յիսուս այս առակով ի՞նչ հասկցնել ուզեց։

Պ. Հասկցնել ուզեց թէ մենք ալ պարտաւոր ենք դրամով ու մարմնաւոր ողորմութիւններով աղքատները շահիլ և թէ կարելի չէ Աստուծոյ և մամոնայի (ստակի) միանգամայն ծառայել։

Հ. Մեծատունին ու Ղազարոսի առակը ինչպէս է։

Պ. Մեծատուն մարդ մը փառաւոր ըզգեստներով զարդարուած՝ ամէն օր ուտելով խմելով ուրախութեան մէջ էր։ Անոր դրան քովն ալ աղքատ Ղազարոսը կը նստէր, այնչափ ողորմելի որ Մեծատունին սեղանէն ինկած հացի փշրանքներուն կարօտ էր և շուներն անոր վէրքերը կը լիզէին։ Երկուքն ալ մեռնելէն ետքը՝ Մեծատունը Դժոխքին մէջէն տեսնելով որ Ղազարոս Արքայութեան մէջ Հայր Աբրահամին գիրկը նստած էր, սկսաւ կանչել. «Հա՛յր Աբրահամ, ողորմի՛ր ինծի. ղրկէ՛ Ղազարոսը որ իր մատին ծայրը ջրով թրջէ ու իմ չորցած ցամաք լեզուս զովացնէ։ —Այդ բանը անկարելի է, ըսաւ Աբրահամ. քու կենացդ մէջ ունեցած վայելմունքդ ու Ղազարոսին քաշած չարչարանքը միտքդ բե՛ր։» Մեծատունը նորէն աղաղակեց. «Հա՛յր, կ՚աղաչեմ քեզի, գոնէ այդ մարդը ղրկէ՛ հօրս տունը որ երթայ եղբայրներուս իմացնէ, չըլլայ թէ անոնք ալ այս տանջանքին տեղը գան։» Աբրահամ պատասխան տուաւ. «Ա-

նոնք ունին Մովսէսի և ուրիշ մարգարէներու գրքերը, թո՛ղ կարդան ու հասկնան։ —Ո՛չ, այդպէս չըլլար, ըսաւ Մեծատունը, պէտք է մեռելներէն մէկը երթայ անոնց քարոզէ որ ապաշխարեն։» Բայց Հայր Աբրահամ անոր յոյսը կտրեց սա վերջին խօսքով. «Եթէ եղբայրներդ մարգարէներուն գրած խրատներուն մտիկ չեն ըներ, յայտնի է որ մեռելներէն մէկն ալ երթայ՝ մտիկ չպիտի ընեն» (Ղուկ. ԺԶ. Գ. 19—31 հմր.)։

Հ. Այս առակով ինչ ուզեց յայտնել Յիսուս։

Պ. Պէտք չէ որ մարդ իր յոյսը բոլորովին այս աշխարհիս մարմնաւոր վայելչութիւններուն և փառքին վրայ հաստատէ, հապա Սուրբ Գիրքերուն միտ դնէ ու անդիի աշխարհքը միտքէ չհանէ։

Հ. Դատաւորին առակը ինչպէս է։

Պ. Քաղաքի մը դատաւորը ո՛չ Աստուծմէ կը վախնար և ո՛չ մարդոյմէ կ՚ամչնար։ Այրի կին մ՚ալ ամէն օր անոր քովը կուգար ու կ՚աղաչէր որ իր դատաստանը կըտրէ։ Երկար ատեն դատաւորը այդ կնկան

գործին հոգ չի տարաւ, բայց կնիկը այնչափ գնաց եկաւ ու աղաչեց որ դատաւորը ա՛լ ձանձրանալով սկսաւ ինքնիրեն ըսելու. «Թէպէտ Աստուծմէ վախ չունիմ ու մարդոցմէ չեմ ամչնար, բայց սա կնկան դատաստանը վերջացնեմ որ ձեռքէն ազատիմ» (Ղուկ. ԺԸ. Գ. 1—5 հմր.)։

Հ. Յիսուս այս առակով ի՞նչ իմացնել ուզեց։

Պ. Հասկցնել ուզեց որ շատ հարկաւոր է մեզի ամէն ատեն Աստուծոյ աղօթք ընել, որպէս զի Աստուած ալ մեզի ողորմի ու մեր մշտակայ աղաչանքը լսէ։ Երբոր Աստուծմէ չվախցող ու մարդոցմէ չամչցող դատաւորը շատ աղաչանքի չի դիմանար, հապա Աստուած՝ որ ողորմած է և բարի՝ ո՞րչափ աւելի գութ ունի իւր ստեղծուածներուն վրայ ու անոնց աղաչանքը կը լսէ։

Հ. Փարիսեցիին ու Մաքսաւորին առակը ի՞նչպէս է։

Պ. Փարիսեցին ու մաքսաւորը տաճարը գացին. Փարիսեցին սկսաւ աղօթելու և ըսաւ. «Աստուա՛ծ իմ, փա՞ռք քեզ որ ուրիշ

մարդոց կամ սա Մաքսաւորին պէս անիրաւ ու յափշտակող չեմ. շաբաթը երկու անգամ պահք կը պահեմ և իմ ունեցածներուս տասանորդը կուտամ»։ Բայց Մաքսաւորը ինքզինքը մեղաւոր ճանչնալով աչքն անգամ չէր ուզեր դէպ ի վեր բարձրացնել և կուրծքը ծեծելով կ'ըսէր. «Աստուա՛ծ, մեղաւորիս ողորմի՛ր ու մեղքերուս թողութիւն տո՛ւր»։ Աստուծոյ առջեւ Մաքսաւորը Փարիսեցիէն աւելի արդար համարուեցաւ (Ղուկ. ԺԸ. Գ. 9—14 հմր.)։

Հ. Յիսուս այս առակով ի՞նչ յայտնել ուզեց։

Պ. Մեղաւոր մարդը՝ եթէ խոնարհ սրտով «Մեղա՛յ» ըսէ ու Աստուծմէ թողութիւն խնդրէ՝ հաճելի կ'ըլլայ, բայց արդարը եթէ ամբարտաւանութեամբ պարծենայ՝ կը դատապարտուի։

Հ. Տանուտէրին ու մշակներուն առակը գիտե՞ս։

Պ. Տանուտէր մը առաւուն ելաւ, մշակներ բռնեց մէյմէկ դահեկան վարձքով ու իր այգին ղրկեց։ Եաքը ժամը երեքին, վեցին, ին-

նին ուրիշ պարապ մարդիկ ալ գտաւ, հետզհետէ այդին դրկեց՝ ըսելով. «Գացէ՛ք աշխատեցէ՛ք, և ինչ որ արժան է՝ ձեր վարձքը կուտամ»։ Երեկոյին երբոր ամէն մշակները այդիէն դարձան, տանուտէրը իւր ընտեսին հրամայեց որ ամէն մէկուն մէյմէկ դահեկան տայ։ Առաջ վարձուած մշակները այս բանը տեսնելով սկսան տրտնջալ ու ըսին. «Մենք առտուընէ մինչեւ իրիկուն աշխատեցանք. ինչո՞ւ համար մէկ ժամ աշխատող մըշակներն ալ մեզի չափ վարձք կ՚առնեն»։ Տանուտէրը դարձաւ այն տրտնջացողներէն մէկուն ըսաւ. «Ընկե՛ր, քեզի ի՞նչ վնաս կայ. չէ՞ որ քեզի մէկ դահեկան խոստացած եմ, ա՛ռ քու մէկ դահեկանդ և գնա՛. միթէ ես իրաւունք չունի՞մ որու ինչ որ ուզեմ՝ իմ քսակէս տալու» (Մատթ. Ի. Գլ. 1—15 հմր.)։

Հ. Յիսուս այս առակը ըսելով ի՞նչ ուզեց հասկցնել։

Պ. Շատ մարդիկ թէպէտ ուշ, բայց սրտով շատ ջերմեռանդ ու Աստուծոյ մօտ ըլլալով՝ մեծ շնորհքներու արժանի կ՚ըլլան,

որովհետեւ կանչուածները շատ են եւ ընտրուածները քիչ։

Հ. Քանքարը չահեցնող ծառաներուն և քանքարը պահող ծառային առակը ի՞նչպէս է։

Պ. Ազնուական մարդ մը հեռի երկիր երթալու պատրաստուած ըլլալով, իւր ծառաները կանչեց ու ամէն մէկուն առանձին առանձին ստակ բաժնեց. մէկուն հինգ, մէկուն երկու և մէկուն մէկ քանքար տուաւ և պատուիրեց որ մինչեւ իրեն դառնալը՝ այն ստակը շահեցնեն։ Ազնուականը ճամբորդութենէն դարձած ատենը՝ ծառաները կանչեց ու իմանալ ուզեց թէ ամէն մէկը իր առածը ո՞րչափ շահեցուցեր է։ Հինգ քանքար առնողը հինգ ալ շահ բերաւ, երկու առնողը երկու ալ վաստակ ցուցուց, ուստի երկու ծառան ալ գովութիւն առին ու պատիւ տեսան։ Իսկ երրորդը, որ մէկ քանքար առած էր, բերաւ տուաւ քանքարը ըսելով. «Տէ՛ր, գիտէի որ դուն խիստ մարդ մ՚ես, իմ առած ստակս չի կորսնցնելու համար տարեր գետնի տակ թաղեր էի, հիմա բերի, ա՛ռ

տուածդ»։ Տէրը բարկացաւ ու ըսաւ. «Ով չար ու ծոյլ ծառայ, եթէ գիտէիր որ խիստ մարդ եմ, ինչո՞ւ համար իմ ս.ուած քանքարս գոնէ սեղանաւորներու չի տուիր որ հիմա շահովը առնէի»։ Այս խօսքը ըսելով՝ յիշեալ քանքարը պահող ծառան վռնտեց ու ձեռքէն ստակը առնելով տասը քանքար ունեցող ծառային տուաւ (Մատթ. ԻԵ. Գլ. 14—28 հմր.)։

Յիսուս այս ըսելով իմացնել կ'ուզէ թէ աշխատասէր մարդիկ կը վարձատրուին և ծոյլք կը պատժուին։

Հ. Երկու զաւակներու առակը ինչպէս է.

Պ. Մարդ մը երկու զաւակ ունէր, երկուքին ալ հրամայեց որ երթան այգին գործեն։ Առաջինը «Կ'երթամ» ըսաւ չի գնաց, միւսը «Չեմ երթար» ըսաւ՝ ետքը զղջաց ու գնաց (Մատթ. ԻԱ. Գլ. 28 30 հմր.)։

Հ. Յիսուս այս առակը ինչո՞ւ համար ըսաւ։

Պ. Փարիսեցիներն ու դպիրները յանդիմանելու համար, ինչու որ անոնք կը պարծենային թէ իրենք Աստուծոյ հնազանդ որդիներն են ու ճշմարիտ աստուածապաշտ,

բայց Աստուծոյ պատուիրանքը չէին պահեր ինչպէս որ արժան էր։

Հ. Այգի տնկողին ու չար մշակներուն առակը գիտե՞ս։

Պ. Մարդ մը այգի տնկեց ու մշակներու յանձնեց։ Ետքը երբոր պտուղի ժամանակը եկաւ, իր ծառաները ղրկեց որ երթան պտուղը քաղեն։ Բայց մշակները ծառաներէն մէկը չարչարեցին, մէկը քարկոծեցին ու մէկը մեռցուցին։ Այգիին տէրը ուրիշ ծառաներ ղրկեց. մշակները անոնց ալ առջիններուն պէս ըրին։ Վերջը իր որդին ղրկեց՝ կարծելով որ անկից կ'ամչնան, բայց մշակները զանի տեսնելնուն պէս՝ այգիէն դուրս հանեցին ու մեռցուցին որ այգին իրենք ժառանգեն։ Այս այսպէս ըլլալով, այգիին տէրը ի՞նչ պիտի ընէր. ի հարկէ այն չարագործ մշակները սաստիկ պատժով հարուածելէն ետքը՝ այգին ուրիշ մշակներու յանձնելու էր որ ժամանակին պտուղը իրեն տան (Մատթ. ԻԱ. Գլ. 33—41 հմր.)։

Հ. Յիսուս այս առակը ի՞նչպէս մեկնեց։

Պ. «Աստուած Հրէից ազգին մարգարէներ զրկեց, բայց Հրեաները զանոնք չարչարեցին ու մեռցուցին։ Հիմա ես եկած եմ, զիս ալ մեռցնել կ'ուզեն։ Ուստի Աստուծոյ Արքայութիւնը անոնցմէ պիտի առնուի և այն ազգերուն պիտի արուի, որոնք աստուածպաշտութեան պտուղ կուտան»։

Հ. Թագաւորին տղուն հարսնիքը ինչպէս է։

Պ. Թագաւոր մը իր տղուն հարսնիքը կ'ընէր և ծառաները զրկեց որ բարեկամները հրաւիրեն. բայց բարեկամներէն ոմանք մէյմէկ պատճառով հարսնիք չի գացին. ոմանք ալ ծառաները բռնեցին մեռցուցին։ Թագաւորը զայրանալով՝ զինուորներ զրկեց, զանոնք ամէնն ալ ջարդել տուաւ և տուներնին տեղերնին այրեց։ Եարը փողոցներէն անցնողները ներս կանչել տուաւ ու տեսնելով որ մէկը հարսնիքի լաթ հագած չէ, ըսաւ անոր. «Ընկե՛ր, եթէ հարսնիքի լաթ չունէիր, ինչո՞ւ համար այս տեղը մտար»։ Մարդը պապանձեցաւ ու չկրցաւ պատասխան տալ։ Ուստի Թագաւորը հրամայեց որ անոր ձեռ-

քերն ու ոտքերը կապեն ու հարսնիքէն դուրս հանեն (Մատթ. ԻԲ. Դլ. 2—13 հմր.)։

Հ. Յիսուս այս առակով ինչ հասկցուց։

Պ. Հրեաները զինքը անարգելնուն համար պատժոյ արժանի են, և Աստուծոյ արքայութեան մէջ միայն առաքինութեամբ զարդարուած հոգին տեղ ունի։

Հ. Տասը կուսանաց առակը ինչպէս է։

Պ. Տասը կուսանք կային, հինգը յիմար ու հինգը իմաստուն։ Անոնք ձեռքերնին լապտեր բռնած՝ հարս ու փեսային առջևը ելան։ Իմաստուն կուսանք ուրիշ ամաններով ալ ձէթ առած էին հետերնին, իսկ Յիմարները առած չէին։ Փեսային գալը ուշացաւ ու ամէնքը քնացան։ Կէս գիշերին ձայն ելաւ. «Ելի՛ք, ահա Փեսան կուգայ»։ Ամէնքն ալ ելան ու լապտերնին պատրաստեցին։ Եւ որովհետև Յիմար կոյսերուն լապտերները մարելու մօտ էին, Իմաստուններէն իւղ ուզեցին, բայց անոնք չի տուին՝ ըսելով. «Կարելի է թէ մեզի ալ չի բաւականանայ. գացէ՛ք ծախողներէն առէ՛ք»։ Յիմարները գացին,

Փեսան ալ եկաւ. Իմաստունները պատրաստ ըլլալով՝ Փեսային հետ հարսնիքը մտան ու դուռը գոցուեցաւ։ Յետքը ցիմարները եկան սկսան Փեսային աղաչել որ դուռը բանայ։ Բայց Փեսան չբացաւ ու ըսաւ. «Ես ձեզի չեմ ճանչնար» (Մատթ. Իե. Գղ. 1—12 հմր.)։

Հ. Յիսուս այդ առակով ի՞նչ հասկցնել ուզեց։

Պ. Պէտք է որ հոգիներնուս փրկութեանը համար հոգալու գործերնիս անհոգութիւնով օրէ օր ետ չձգենք, հապա միշտ արթուն ու պատրաստ ըլլանք իմաստուն կուսանաց պէս, որ անմահ փեսայի առագաստէն (այսինքն Քրիստոսի արքայութենէն) չը զրկուինք։

Գ. Քրիստոսի կենարար վարդապետութիւններեն

այբուբենի կարգաւ քաղուածք

Ամենայն ծառ, որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի և ի հուր արկանի։— Ամենայն մեղք և հայհոյութիւն թողցին մարդկան, բայց զհոգւոյն հայհոյութիւն մի՛ թողցի..., մի՛ յայսմ աշխարհի և մի՛ ի հանդերձելումն։— Ամենայն որ առնէ զմեղս՝ ծառայ է մեղաց։ Ամենայն որ արտաքուստ ի ներքս մտանէ ի մարդ, ոչ կարէ զնա պղծել, զի ոչ եթէ ի սիրտ նորա մտանէ, այլ յորովայն, և արտաքս ելանէ։— Ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս և ոչ գայ առ լոյսն զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա, իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն զի յայտնի լիցին գործք նորա թէ Աստուծով գործեցան։— Ամենայն տունկ՝ զոր ոչ տնկեաց Հայր իմ երկնաւոր՝ խլեսցի։— Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս։— Անկուայ ձեռօք ուտել՝ ոչ պղծէ զմարդ։— Անհնարինք առ ի մարդկանէ՝ հնարաւորք են յԱստուծոյ։— Անձուկ է դուռն և նեղ ճանապարհն որ տանի ի կեանս։— Առանց իմ ոչինչ կարէք առնել։— Առաջնորդք կոյրք որ զմժղուկս քամէք և զուղտս կլանէք։— Արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ,

գանձ անպակաս յերկինս ուր ոչ գող մերձենայ և ոչ ցեց ապականէ։

Բազում են կոչեցեալք և սակաւ են ընտրեալք։— Բարի արարէ՛ք ատելեաց ձերոց։

Բարւոք է աղ. եթէ աղն անհամեսցի՝ ո՞ւր համեսցի։

Գանձեցէ՛ք ձեզ գանձս յերկինս, ուր ո՛չ ցեց և ո՛չ ուտիճ ապականեն, և ո՛չ գողք ակն հատանեն և գողանան։— Դինի նոր ի տիկս նորս արկանելի է։

Դժուարաւ մտցէ մեծատունն յարքայութիւն երկնից։ Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել։— Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք զոր ես պատուիրեմ ձեզ։

Եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաւոր։ Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ Հայրն ձեր երկնաւոր թողցէ ձեզ զյանցանս ձեր։—Եթէ ոչ դարձջիք և լինիջիք իբրեւ զմանկտի, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից։— Եթէ ունիցիք հաւատս քան զհատ մանանխոյ և ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց ասջի անդր, փոխեսցի և ոչ ինչ անհնարին լիցի ձեզ։— Եթէ ունիցիք հաւատս՝ քան զհատն մանանխոյ և ասիցէք թթենւոյս այսմիկ. խլեաց և տնկեաց ի ծովու, և հնազանդեսցի։— Եթէ ոք զքանն իմ պահեսցէ, զմահ մի՛ տեսցէ յաւիտեան։ Եթէ ոք կամիցի զկնի իմ գալ, ուրասցի զանձն և առցէ զխաչ իւր և եկեսցէ զկնի իմ։— Եթէ ոք սիրէ զիս՝ զքանն իմ պահեսցէ։— Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանն իմ պահեսջիք։— Եղերուք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս, և միամիտք իբրեւ զաղաւնիս։— Եղերուք գթածք. որպէս և Հայրն ձեր երկնաւոր գթած է։— Եղիցի՛ ձեր բան այո՛ այո՛, և ոչն ո՛չ։ — Երանեալ է՝ որ ոչ գայթակղեսցի յիս։— Երանի՛ որոց ոչ իցէ տեսեալ զիս և հաւատասցեն։

Զամենայն զոր միանգամ կամիջիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա։ — Զամենայն ինչ զոր և խնդրեցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք։— Զայս պատուիրեմ՝ զի սիրեսջիք զմիմեանս։ —Զգոյշ լերուք ողորմութեան ձերում՝ մի առնել առաջի մարդկան, որպէս թէ ի ցոյց ինչ նոցա։ —Զի՞ տեսանես զչիւղ յական եղբօր քոյ և ի քում ական զգերանդ ոչ նչմարես։ — Զի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն շահեսցի և զանձն իւր տուժեսցէ։

Ընդ ամենայն դատարկ բանի զոր խօսեցին մարդիկ, տացեն համար յաւուրն դատաստանի։ — Ընդարձակ է դուռն և համարձակ ճանապարհն՝ որ տանի ի կորուստ։

Ի բանից քոց արդարացիս և ի բանից քոց պարտաւորեսցիս։ —Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան։ —Ի պտղոյ անտի ծառն ճանաչի։ Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։—Ի տան հօր իմոյ օթեւանք բազում են։ — Իւրաքանչիւր ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի։

Լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրոգի։

Խնդրեցէ՛ք և տացի ձեզ, հայցեցէ՛ք և գտջիք, բաղխեցէ՛ք և բացցի ձեզ։

Ծառ բարի պտուղ բարի առնէ, և ծառ չար պտուղ չար առնէ։ —Ծառայ՝ որ գիտիցէ զկամս տեառն իւրոյ և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արբցէ գան բազում։ Եւ որ ոչն գիտիցէ և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ։

Կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սիալ է և երկոքին ի խորխորատ անկանին։

Հայեցարո՛ւք ընդ ագռաւս, զի ոչ սերմանեն և ոչ հնձեն, որոց ոչ գոն չտեմարանք, և ոչ համբարանոցք, և Աստուած կերակրէ զնոսա. որչափ եւս առաւել զձեզ որ լաւ էք քան զթռչունս։ —Հայր մի՛ կոչէք ձեզ յերկրի, զի ձեր մի է հայր որ յերկինս է։ — Հա՛ն նախ զգերանդ յականէ եղբօր քոյ։ — Հաստատուն կացէ՛ք ի սէր իմ։ — Հարկ է գալ գայթակղութեանց, բայց վա՛յ մարդուն այնմիկ՝ յոյր ձեռն գայցէ գայթակղու-

թիւն։ —Հոգի է Աստուած և երկրպագուացս նորա՝ հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկրպագանել։

Մարգարէ յիւրում քաղաքի պատիւ ոչ ունի։ — Մարդ բարի ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս։ —Մեծն ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր։ — Մի՛ այսուհետեւ հոգայցէք և ասիցէք։ Զի՞նչ կերիցուք, կամ զի՞նչ արբցուք կամ զի՞նչ զգեցցուք..., քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն։ — Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց։ — Մի՛ դատէք՝ զի մի դատիցիք։ — Մի՛ զոք կոչէք վարդապետ, զի մի է ձեր ուսուցիչ։ — Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէ՛ք։ Մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր Քրիստոս է։ — Մի՛ տայք զսրբութիւն շանց։

Ցայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։ — Յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա՛ զաղքատս և զխեղճս, զկաղս և զկոյրս, և երանելի լինիցիս, զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ, և հատուսցի քեզ փոխարէն ի յարութեան արդարոց։ — Յորժամ առնիցէք զամենայն հրամայեալս ձեզ, ասասջիք թէ ծառայք անպիտան եմք, զոր պարտէաքն առնել՝ արարաք։ — Յորժամ կայցես յաղօթս, մուտ ի սենեակ քո և փակեա զդուռն քո և

կաց յաղօթս առ Հայր քո ի ծածուկ։ — Յորժամ կայցէք յաղօթս, մի՛ չատախօս լինիք իբրեւ զհեթանոսս։ — Յորժամ յաղօթս կայցէք, թողուցուք եթէ ունիցիք ինչ զումեքէ, զի և Հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր։ — Յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ ձախս քոյ՝ զինչ գործէ աջ քոյ։ — Յորժամ պահիցէք, մի՛ լինիք իբրեւ զկեղծաւորսն տրտմեալք որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երեւեսցին մարդկան՝ թէ պահիցեն։

Նովին չափով որով չափէք՝ չափեսցի ձեզ։

Շարաթ վասն մարդոյ եղեւ, և ոչ թէ մարդ վասն շաբաթու։ — Շատ է աշակերտին եթէ եղիցի իբրեւ զվարդապետ իւր, և ծառային՝ իբրեւ զտէր իւր։

Ոչ եթէ ի փչոյ քաղեն թուզ և ոչ ի մորենւոյ կթեն խաղող. — Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս։ — Ոչ է պիտոյ բժշկի, ողջոց, այլ հիւանդաց։ Ոչ է աշակերտ առաւել քան զվարդապետ, և ոչ ծառայ՝ քան զտէր իւր։ Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց։ — Ո՛չ է ծառայ մեծ քան զտէր իւր, և ոչ առաքեալ մեծ քան զայն որ առաքեացն զնա։ — Ո՛չ է մարգարէ անարգ՝ բայց եթէ ի գաւառի իւրում։ — Ո՛չ ինչ է ի ծածուկ որ ոչ յայտնեսցի, և գաղտ-

նի որ ոչ ծանիցի։ — Ո՛չ կարէ ծառ բարի պտուղ չար առնել։ — Ո՛չ կարէ քաղաք թաքչիլ՝ որ ի վերայ լերինն կայցէ։ — Ո՛չ կարէք Աստուծոյ ծառայել և մանոնայի։ — Ո՛չ որ ինչ մտանէ ընդ բերան պղծէ մարդ, այլ որ ինչ ելանէ ի բերանոյ՝ այն պղծէ մարդ։ — Ո՛չ ոք կարէ երկուց տէրանց ծառայել, կամ զմին ատիցէ և զմիւսն արհամարհիցէ։ — Որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինս է, նա է իմ եղբայր և քոյր եւ մայր։ — Որ ասիցէ ցեղբայր իւր՝ յիմար, պարտաւոր լիցի ատենի։ — Որ արբուսցէ միւսմ ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ՝ ոչ կորուսցէ զվարձս իւր։ — Որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց՝ պարտաւոր լիցի դատաստանի։ — Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։ — Որ գնայ ի խաւարի՝ ո՛չ գիտէ յո՞ երթայ։ — Որ գտանէ զանձն իւր կորուսցէ զնա, և որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա։ — Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և որ զիսն ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ։ — Որ ինչ ի մարդոյն ելանէ՝ այն պղծէ զմարդ. զի ի ներքուստ ի սրտէ մարդկան՝ խորհուրդք չարութեան ելանեն։ — Որ ի փոքուն հաւատարիմ է՝ և ի բազմին հաւատարիմ է և որ ի փոքուն անիրաւ՝

և ի բաղմին անիրաւ է։ Որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ և որ բաղխէ՝ բացցի նմա։ — Որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ, և որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ։ Որ կորուսցէ զանձն իւր վասն Աւետարանին՝ ապրեցուսցէ զնա։ — Որ ոչ ընդ իս է՝ հակառակ իմ է, և որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ։ — Որ ունի զպատուիրանս իմ և պահէ զնոսա՝ նա է որ սիրէ զիս։ — Որ ոք դայթակղեցուսցէ զմի ի փոքրկանցս յիս հաւատացելոց, լաւ է նմա՝ եթէ կախիցի երկայն իշոյ ընդ պարանոց նորա, և ընկղմիցի ի խորս ծովու։ — Որով դատաստանաւ դատիք՝ դատելոց էք։ — Որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ։ — Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս արարէք և դուք նոցա։ Ուսարուք յինէն զի հեզ եմ և խոնարհ սրտիւ։ — Ուր իցեն երկու կամ երիք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա։

Զէ մարգարէ ընդունելի ի քաղաքի իւրում։ — Զէ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ։

Պատուիրան նոր տամ ձեզ՝ զի սիրիցէ՛ք զմիմեանս։ — Պարտ է չաբաթու բարի գործել։

Սիրեցէք զթշնամիս ձեր։

Տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ։

Օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր։

ՄԱՂԹԱՆՔ

ԴԱՍ ԱՌՆԵԼԷՆ ԱՌԱՋ

Միշտ էդ ինքնաբուն, ինքնազօր Աստուած
Դու Տէ՛ր, Տնօրէն՝ Հայր հանուրց ազգաց,
Կարեա՛ կարիլ մի յանդ մերոց մտաց,
Ի քոց անսպառ յերկնածիր շնորհաց,
Մատուցցուք Քեզ, Տէր, պաշտօն գեղեցամած։

ԳՈՀՈՒԹԻՒՆ

ԴԱՍ ԱՌՆԵԼԷՆ ԵՏՔԸ

Փա՛ռք Քեզ, բարձրեալ Աստուած երկնաւոր,
Քեզ հրաւիրն միտք մեր, Քեզ մեր սիրտ բոլոր,
Դու միայն Հաստիչ մըշտնջենաւոր,
Զի՛ք մեր այլ Աստուած, դու միայն հզօր,
Ըզքեզ ո՞ հետս... այլ մենք հանաչեմք,
Զի ի Քեզ եղամք, Քեզ կեամք, Քեզ շնչեմք.
Առանց Արարչիդ խնամոց ոչինչ եմք.
Պահեա՛ զմեզ, Տէ՛ր, ըզքեզ աղաչեմք։

ՄԵՏ ԱՌՆ ՏՊ-ՀԱՐԱՆ
Գ. Լենինգրադ
ՀՍՍՌ-Արմ ՍՍՀ
Ս. Սմ. Ա. Մասհարեա
Ս. ՍՍՍՌԻՀՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

		Դրք.
1.	Մանկապարտեզ Ա. տարի	2
2.	» Բ. »	3
3.	Տարրական Դասընթացք Ա. տարի	3
4.	» » Բ. »	4
5.	Միջին » Ա. »	4
6.	» » Բ. »	4
7.	Մայրենի Լեզու Գ. տարի	4
8.	» » Դ. »	4
9.	Ա. Գիրք Ցրանոեանի ի հայ բարբառ	3
10.	Քրիստոնէական	$1^1/_2$
11.	Դեղագրութիւն Ե. Թանիրանեանի	
	Տեսր Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ.	
	Հատը 20ական փարա	

ԴԻՄԴԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

1.	Հողային Աշխարհագրութիւն	1
2.	Սերմնացուներու ընտրութեան օգուտները	1

Սոյն հրատարակութեանց համար դիմել ուղղակի Ընկերութեան Դրատնենակը, Պոլիս, Պանչէ Գապու, Սատրգիէ խան, թիւ 27:

Ծանօթ.— Հրապարակ ելած մէն մի օրինակ Ընկերութեան պաշտօնական կնիքը պէտք է կրէ անպատճառ։

«Ազգային գրադարան»
NL0161332